Հ. Ֆ. Դ.
ՄԱՄԼՈՅ ԳԻՒԱՆ

ԴՐՕՇԱԿ

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ“ ՕՐԳԱՆ

1904

№ 6 (147) XIV ՏԱՐԻ ՅՈՒՆԻՍ 1904

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՈՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ

ՄԱՄԼՈՅ ՀԱՅԿԱՆ
Հ.Յ.Դ. ԳԻՐՔԻ ԲՈՒՂԱՐԱՆ
A.R.F. BUREAU LIBRARY

„ԴԱՏԱՐԿՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ"

Սասուն — առանց Հայերի։

Ահա „փաղիշահական" ծրագիրը Եղբեզ-Բիօսկի Մենակեացի, մշակուած պարսպապատ պալատի մահաշունչ սենեակներում, ուղարկուած ստրուկ փաշաներին՝ գործադրութեան համար։

Դեռ երկու ամիս առաջ, երբ առաջին անգամ հրապարակ եկաւ այդ դժոխային մտադրութեան յղացումը Թագակիր Ոճրագործի գլխի մէջ, դարձեալ գտնուեցին Մի ա մ ի տ ն ե ր, ի հարկէ մեծ մասամբ „քաղաքագիտութեան" և „քաղաքական կաշառակերութեան" շրջանակներում, որոնք փորձեցին՝ գրչով և լուրերով՝ հանդիստացնել և հաւատացնել, որ եւրոպական պատժի հեռանկարի դիմաց՝ Կարմիր սուլթանը չի յանդգնի այդ քայլն անել, չի համարձակուի այդ աստիճան ըմբոստանալ տարրական արդարութեան պահանջների դէմ։

Փաստերը այդ էլ հերքեցին։

Եւ այդ հերքման հետ միասին, լուրերի և խաբրիկների այս յուզիչ օրերին, ապստամբութեան խրախուսիչ փաստերի կողքին՝ անհաւատալի համարձակութեամբ իրան թագցնող վարագոյրն է պատռում այն ծրագիրը, որը նոյնիսկ կոտորածների պատմագրութեան մէջ՝ պիտի համարուի բացառիկ։

„Սրով ու կրակով դատարկուող Սասունի քանդած գիւղերը — ասում է երկրից եկած նամակը — կ'ուզեն տալ քուրդ ցեղերուն. որպէսզի բարձր և ամուր լեռներու լանջերուն այլևս չբուրէ ազատութեան շունչը, իսկ Դաշտի հողերու մի մասով կ'ուզեն խաբել հալածական լեռնականները, դրուած այսօր երկու կրակի մէջ"։

Զաղջելի, վայրագ բռնութիւն։

Նա տանել, համբերել չէ կարող թէ բողոքողներին, որոնք գլուխ ծռել չեն ուզում ստրկացնողի եաթաղանի առջև, և թէ այն լեռներն ու լանջերը, ուր ազատասէրի գլուխը նոյնքան հպարտ է և բարձր, որքան ազատ լեռների կատարն ու գագաթը։ Սասունցին ատելի է, որովհետև բողոքող է։ Ատելի է ինքը Սասուն, որովհետև բոյն է բողոքի, արծւաբերդը գոռող ազատութեան։

Աւելի ևս։ Ատելի է ինքը հայը և Սասունից շատ հեռու, բոլոր այն կէտերում, ուր նա՝ յոգնած իր ստրուկ պատմութեան լալկան էջերից, վերաւորուած այն ստոր ացնող ածականներից, որ դրոշմում է նրա ճակատին և՛ պատմագիրը, և՛ հարևանը, և՛ օտարը, փորձում ուժին ուժով պատասխանել, բռնութեանը հակադրել դիմադրութիւն, ազատութեան շաւիղ բանալ այն վայրերում, ուր բարձր իգլուխ թագաւորում է մահաշունչ բռնութիւնը։

—

Եւ որքա՜ն նման և համերաշխ են հալածանքի ձեռնարկների մէջ հայատեաց քաղաքականութեան գայիսոնակիր զոյգ-ներկայացուցիչները։ Այնտեղ, Արևեան երկրի ծոցում, մահմեդական Բռնաւորը Սասունն է ուզում դատարկել նոյն ծրագրով, ինչ 1896-ին Զէյթունը կամ 1897-ին Վասպուրականը. իսկ սահմանագծի միւս կողմը, Մասիսի շրջականներում, քրիստոնեայ Միապետը՝ իր լիազօրների թաթերով Արարատեան դաշտը հայերից „մաքրելու" ձեռնարկի վրայ է վարժութիւններ անում— ամենասպահով միջոցը ռուսական տիրապետութեան։ Մի տեղ „անհանգիստ" հայի տեղ մարդակեր քիւրդը պիտի նստէ, իսկ միւս տեղ՝ „ուղղափառ տգիտութիւնը", այդ դժբախտ պատանդանը ցարերի տիրապետութեան...

Ի՞նչ է անունը այդ „ներդաշնակ" ծրագրի, մշակուած երկու մայրաքաղաքներում, թէև միմեանցից շատ հեռու և ըստ երևոյթին շատ տարբեր, բայց „հոգով և սրտով" այնքա՜ն նման, այնքա՜ն համերաշխ...

Հ ա յ ա ս տ ա ն՝ ա ռ ա ն ց հ ա յ ե ր ի—ահա այդ անունը, արդէն ընտանի հայութեան ականջին, երբեմն ահաւոր ու սոսկալի, բայց այժմ... այժմ արժանի հեգնութեան և նոյնիսկ արհամարհանքի։

Անցան ահաւոր ժամանակները և անցան անդարձօրէն, վերջնականապէս։ Ժամանակը դաւաճանեց ազատութեան թշնամիներին։ Բռնապետութիւնը սխալւում է սահմանի թէ այս և թէ այն կողմը։ Անցան պ ա տ մ ա կ ա ն այն շրջանները, երբ կարելի էր սպանել հայութիւնը, երբ բռնութեան հարուածների տակ նա կարող էր մեռնել, իբրև մի հիւանդ, որ աւանդում է հոգին խոր քունի մէջ՝ առանց զգալու ողբերգական բոպէն, նրա սկիզբն ու վախճանը...

Պատմական փորձանքի այն սև օրերը, երբ ժողովրդական ոգին մ ր ա փ ա ծ էր, և ազգերի վրայ, ինչպէս ստեղծագործութեան առասպելներն են երգում, շրջում էր բռնութեան-արարչի ոգին՝ ամենակարող և ամենուրեք, անդառնալի են այլևս։ Հասան զարթնումի օրերը։ Ժողովուրդները տրորեցին քնաթաթախ աչքերը, շտկեցին իրենց մէջքերը։ Հայութիւնը նետուեց կռուի մէջ. ազատու-

թիւնը իր հերոսներն ունեցաւ և նրա անունով թափուեց այն արիւնը, որից երբեմն սոսկում էին ստրուկ նախահայրերը:

Եւ որքա՜ն զոհեր, որքա՜ն զոհաբերութիւններ եղան այդ բազմախորհուրդ պատմական րոպէն անվտանգ անցնելու համար: Մեր քաղաքական գետանցի տանջանքները՝ նմանը չունին, և ոչ էլ թիւ՝ մեր զոհերը: Անցեալի դիմաց՝ այժմեանները թեթև են, ինչպէս արկածները՝ աղետների դիմաց: Թող թշնամին այդ լաւ յիշէ...

—

Զոհերը քիչ չեն, ճշմարիտ է, բայց շատացան և կուռողները: Դիմադրութեան շունչը, որ անցեալում սահմանափակուած էր փոքրաթիւ ըմբոստ գլուխների մէջ, ինչպէս բացառիկ երևոյթ, այժմ դառնում է ընդհանուր, համատարած, գլխաւոր յատկանիշը ժողովրդական մտածողութեան: 1894-ին Տալորիկի ապստամբութեան հոգին և մարմինը յեղափոխական եկեղ ուժերն էին: Ներկայ թուին, տասն տարի անցած, նրանց միացաւ ժողովրդական մասսան, երէկուան ստրուկը, ազատութեան սեղանին զոհ բերելով ոչ միայն իր ապրուստն ու ապահովութիւնը, այլև իր ու ընտանիքի գոյութիւնը:

Թող թշնամին այդ էլ յիշէ:

Եւ թող չմոռանան բռնութեան զոյգ ներկայացուցիչները, որ յորդառատ արեան մէջ ծլած և արդար վրէժի շունչով կենդանացած կռիւը խոր արմատներ է նետում ամէն կողմ և ամէն ուղղութեամբ: Մի տեղ իբրև հայ-մահմեդական դաշնակցութիւն, մի այլ տեղ իբրև համերաշխ գործակցութիւն հայ և ռուս յեղափոխականութեան, երրորդ կէտի վրայ համերաշխութիւն միմեանցից շատ հեռու, ցայժմ մէկ մէկի անծանօթ ազգերի մէջ, համերաշխութիւն, որ ստիպում է ձեռք ձեռքի տալ հայրենիքով և անցեալով տարբեր, բայց քաղաքական դժբախտութեամբ վիճակակից ազգերին, որոնք բոլորն էլ, յոգնած անվերջ դըժբախտութիւններից, սրբազան յափշտակութեամբ կռուի դաշտն են նետուել, նպաստելու այն ըէժիմի կործանման, որի քուրմը մի մայրաքաղաքում ցարն է, միւսում՝ սուլթանը, որը մի տեղ ծնում է Զէքի-փաշա, միւս տեղ՝ Բօբրիկով, մի պալատի մէջ՝ Նազըմ, միւսում՝ Պլէվէ, մի նահանգում՝ Գօլիցին, մի այլ վիլայէթում՝ Ֆէրիտ-բէյ, ռէժիմ, որ պարբերաբար ստեղծում է արեան և արտասուքի հանդէսներ, — Սասունը Հայաստանում, Սև աղետը Լեհաստանի ծոցում, բանուորական կոտորածները ռուսական քաղաքներում, Ցունիսեան վշտերը Կովկասի մէջ, Ֆինլանդական սուգը վճիտ լճերի երկրում...

Սակայն յաւիտենական չեն այդ սուգն ու արիւնը: Վաղուան օրը — այդ ամէնքս ենք նախազգում — պատրաստում է մի մեծ, հուժկու, սասանեցնող, մեծագղջրդ կործանումն, որի աւերակների տակ շատերը և շատ բան պիտի թաղուի: Որի՞նը պիտի լինի այդ: Արդեօք՝ ժողովուրդների՞նը, թէ՞ դրանց մէջքերին, ինչպէս հաստատ պատուանդանի վրայ, թառած քուրմերինը:

Այդ կը տեսնենք:

Ո՞վ կը դատարկուի. — արդեօք բռնութեան դէմ ըմբոստացող երկիրնե՞րը՝ իրենց ժողովրդներից, թէ՞ ազատասէր. ժողովուրդները՝ բռնապետներից, որոնք իրենց փրկութիւնը որոնում են ամայութեան ու աւերակների մէջ — հայրենիքը ոչ թէ մարդոց, այլ սողունների:

Այդ էլ կը տեսնենք:

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՍԵՓԱԿԱՆ)

ՄՈՒՇ, 8/21 մայիսի
(Թիֆլիզի զօով)

Նոր մանրամասներ ապրիլի 22-ի բռնութիւնների մասին: Կէլի ապաստանած անզէն ժողովուրդը ենթարկուեց գազանային յարձակումների: Շատերը ստիպուեցին փախուստ տալ՝ մի մասը դէպի Անտոթ, կեփին և Խրշիկ, միւս մասը դէպի Մշոյ դաշտը: Թիւրքաց զօրքերը շարունակեցին հալածել և կոտորել կանանց ու երեխաներին: Հալածական ժողովուրդը մի քանի տեղ հերոսական դիմադրութիւն ցոյց տուեց, բայց բաւակաչափ ռազմամթերք չունենալով, տեղի տուեց բռնի ուժին:

Տալորիկը, որտեղ համախմբուած էին 12 գիւղերի բնակիչները և որ պաշարուած էր քիւրդ հրոսակախմբերով, ապրիլի 24-ից սկսած մինչև մայիսի 6-ը դիմադրեց թշնամուն ամենայն տոկունութեամբ: Այդ օրը քրդերը մեծ օգնութիւն ստացան կառավարութիւնից զէնքով ու զօրքով, և այդ պատճառով դիմադրութիւնը դարձաւ անհնարին: Գիւղը վերցնելով՝ արիւնարբու թշնամիները սոսկալի բռնութիւններ գործեցին և տները ենթարկեցին հրդեհի ու թալանի:

Սասունի 15,000 բնակիչներից հազիւ 1,500 կանայք և երեխաներ են բերուած Մուշ: Կոտորածների թիւը դեռ ճիշտ յայտնի չէ: Կուռող տարրը թագնուած է լեռների մէջ: Հաւատարիմ իր կոչման՝ նա հերոսաբար դիմադրում է թշնամուն և կարելին չափ հսկում է ժողովրդի անզէն մասի պաշտպանութեան վրայ: Առանձին հմայքով պէտք է յիշատակել Սասունի ժողովրդի տրամադրութիւնը զէնք կրելու ընդունակ բոլոր տարրերը մերիններ հետ են և կռուում են անգնահատելի հմտութեամբ ու քաջութեամբ: Ընդ՞ծք սակայն զէնքին, որ պակասում է:

Թիւրք կառավարութիւնը քրդերին է յանձնում հայ գիւղերը աւերելու գործը: Սասունը վերջնականապէս դատարկելու ծրագրի իրագործումն է այդ,

կարգադրված կենտրոնական կառավարութեան կողմից։ Խմբապետ Անդրանիկ և Սասունի յեղափոխականները ամրացել են լեռների մէջ։ Թիւրքաց զօրքերը շարունակում են իրանց արշաւանքը նրանց դէմ։ Սպասւում է մեծ ընդհարում։

ԹԱՒՐԻԶ, 9/22 մայիսի

Ռուս-Թիւրքական սահմանագլխի քրդերը անհանգիստ տրամադրութեան մէջ են։ Իմացանք հաստատ աղբիւրից, որ սահմանագլխի ռուս պաշտօնեաները գաղտնի միջոցներով գրգռում են քրդերին և Թիւրքերին հայերի դէմ։ Սասունի դէպքերի մասին ռուսաց իշխանութիւնները անընդհատ տեղեկութիւններ են ստանում կաշառուած քրդերի միջոցով։

ԹԱՒՐԻԶ, 1 յունիսի

(Հնդա-եւրոպական գծով)

Մուշից հաղորդում են վրդովեցուցիչ լուրեր կառավարական բռնութիւնների մասին։ Սուլթանի հրամանով՝ տեղական փաշան և զինուորական հրամանատարը պատրաստում են կոտորած։ Սասունից եկող լուրերը աւելացնում են կովկասահայերի յուզմունքը։ Լուր կայ, որ սահմանից նոր խմբեր են անցել։ Սահմանագլխի պահակների թիւը աւելացրած է։

ԹԻՖԼԻԶ, 29 մայիսի

(Թաւրիզի գծով)

Ոստիկանութիւնը շարունակում է դուրս քշել Թիւրքահայերին։ Փաստ չկայ, բայց կասկածը օրէցօր զօրեղանում է։ Դէպքեր են եղել, երբ հազիւ մի օր ժամանակ են տուել՝ գործերը կարգադրելու համար։ Հաստատ լուր կայ, որ ռուսաց հիւպատոսները՝ Մարսէյլ, Ալէքսանդրիա, Նիւ-Եօրք և այլ տեղեր հրաժարւում են վիզէ անել կովկաս անցնել ցանկացող հայերի անցագիրները։ Ոչ-ռուսահպատակ հայերին չեն թոյլ տալիս Ռուսաստան մտնել։ Վիճակը անտանելի է։

ԹԻՖԼԻԶ, 2 յունիսի

(Հնդա-եւրոպական գծով)

Ռուս-Թրքական սահմանագլուխն են ուղարկուած, Կարսի մօտ, մի քանի օֆիցերներ և երկրաչափներ, քաղաքական ծրագիրներով։ Նրանք պատրաստւում են անցնել սահմանը։ Յարաբերութեան մէջ են քիւրդ և Թիւրք ազդեցիկ անձանց հետ։ Սասունի դէպքերը նրանց յատուկ ուշադրութեան նիւթն է։ Կարսի նահանգապետը նոյնպէս գնաց սահմանագլուխ։ Նպատակը անյայտ է։ Ոստիկանութիւնը լուր է տարածում, որ նահանգապետի գնալու նպատակն է ձերբակալել հայ կամաւորներին, որոնք՝ թւով 600, խմբւած են սահմանագծի վրայ։ Դա պատրուակ պիտի համարել։ Ձերբակալութիւնները խստօրէն շարունակւում են։

ՈՒՐՄԻԱ, 3 յունիսի

Ռուս-Թիւրքական սահմանագլխին երևացել են բաւական էմիսարներ, ուղարկուած Թիւրքաց կառավարութեան կողմից, գաղտնի պրոպագանդի համար։ Լուր եկաւ, որ մի փոքրիկ ընդհարում է տեղի ունեցել Թիւրք ջանբէզարների և սահմանապահ ռուս զինուորների միջև։ Ռուս իշխանութիւնները կալանաւորեցին մի քանի Թիւրք պրոպագանդիստներ, որոնցից երկուսը մոլլաներ են։

ՍԱՍՈՒՆԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ

(Նոր մանրամասներ)

—

Սասուն, 17 ապրիլ

Նախորդներով գրած եմ արդէն մարտ 31-ի և ապրիլ 11-ի ճակատամարտներու առթիւ, ինչպէս նաև ապրիլ 13-ի տեղի կուի մասին։ Այս օր ալ, խոստմանս համաձայն, աւելի ընդարձակ տեղեկութիւն կուտամ վերջին, այն է 13-ի ճակատամարտի մասին։

Ապրիլ 11-ի կուին կը մասնակցէին քրդեր, ձիաւոր ոստիկաններ և զօրքերը։ Ապրիլ 12-ին Բաղէշի կուսակալը իր հետ ունենալով 5 թնդանօթներ և ստւար թւով զօրքեր, ինչպէս նաև Մշոյ և Բաղէշի առաջնորդները և երևելիները, կուգայ Լաճըկանցիք։ Օրեր առաջ արդէն լուր տրուած էր, թէ կառավարութիւնը նախ բանակցութեան պիտի մտնէ, բայց կուսակալի մարդիկ կրնան խաբէութեամբ յանկարծակիի բերել յեղափոխականները և Սասնոյ ժողովուրդը։ Կուսակալի այս դիտումներուն հաստատութիւն կուտային նաև իր հետ բռնի կերպով բերուած անձերը և թնդանօթները։

Ապրիլ 12-ի իրիկուան, ժամը 10-11, կուսակալի կողմէ իբր պատգամաւոր Սէմալ կուգայ Ս. Յովհաննէսի վանահայր Առաքել վարդապետը։ Սա իր հետ կը բերէ պատրիարքին կոնդակը և Մշոյ առաջնորդարանի գրած ապրիլ 10 թուակիր գիր մը, որուն տակ ստորագրած էին Մշոյ և Բաղէշի առաջնորդները, Առաքել վարդապետ և Մշոյ քաղաքական ժողովոյ անդամները։ Այս գրոյն բովանդակութիւնը այն էր, թէ յեղափոխականները անձնատուր ըլլան և ապահով դառնան տեղերնին, իսկ տեղացի ժողովուրդն ալ ամէն կերպով հպատակի կառավարութեան և սպասէ անոր շնորհներուն. հակառակ պարագային՝ կառավարութիւնը խիստ միջոցներու պիտի դիմէ։

Սէմալ կը գտնէին իրենց խմբերով Հրայր և Անդրանիկ, մաս մը ալ շէնբերցի, ալիանցի, կէլիէկոզանցի և ախպիի իշխաններ։ Ասոնք պատգամաւորին կը պատասխանեն, թէ „անմիջապէս չեն կարող պատասխանել, քանի որ իրենց ընկեր Վահան կը գտնւի Տաղվերներ և մաս մը ալ իշխաններ ներկայ չեն. պէտք է բոլորը հաւաքուին տեղ մը գիշերը և կամ յաջորդ օրը, ժողով մը կազմեն, պատասխանը պատրաստեն և զինքը ճամբու դնեն“։ Պատգամաւորը կը մնայ։

Անմիջապէս Հրայր, Անդրանիկ և տեղացի իշխաններ ժողով մը գումարելով, կ'որոշեն յաջորդ առաւօտ Գեղաշէնի մէջ ժողով մը կազմել բայց որովհետև իրենց անձնատուութեան պատասխանը մերժողական պիտի ըլլար, կ'որոշեն պատասխանելէ վերջ Ալիանքի, Սէմալի, Գեղաշէնի, Շուշնամերկի, Տաբրքի, Իրիցունքի և Էն գիւղերու ուժերը և ժողովուրդը հաւաքել կէլի, բոլորը մէկտեղ, և Թշնամւոյն գալստեան սպասել։ Այս բոլոր գիւղերը կրակի կը տրին։ Անդրանիկ գիշերով կը մեկնի դէպի Տաբրք, մաս մը զինուոր կուղարկուին Ալիանցիք և մաս մը ժողովուրդ ալ իրենց գիւղերը։

Գիշերով լուր կը տրուի Վահանին, որ հասնի շուտով Գեղաշէն։ Վահան 13-ի առաւօտ կանուխ կը հասնի Գեղաշէն և տեսնելով որ մարդ չկայ, անմիջապէս լուր կուտայ Սէմալ և Տաբրք, որպէս զի շուտով հասնին և՝ մինչ կրսպասէ ընկերներու գալստեան, ահա անոնց տեղը հրացանի ձայներ և օգնութեան կոչեր է որ կը լսուին... Վահան անմիջապէս իր քով եղած մի խումբ դեռ...

քանի մը գիւղացիներու հետ կ'ուղարկէ օգնութեան ու ինքն կը բարձրանայ Շուշնամերկի գլուխ և միւս կողմէն ալ լուր կը ղրկէ Անդրանիկին, որ օգնութեան հասնի Սէմալի։ Գեղաշէն գիւղն ալ կը վառի։

Առաւօտեան ժամը 1-ին, Հրայր՝ Սէմալի մէջ հարկ եղած կարգադրութիւններ ընելէ վերջ, երբ կը պատրաստուի մեկնիլ Գեղաշէն, կը նշմարէ, որ Թիւրք բանակներ Մերկէմօզանի ճամբով առաջ կուգան։ Մերոնք նախ կը կարծեն, թէ ցոյց մըն է այդ, բայց յետոյ կը համոզուին, որ կատարեալ շարժումն մըն է և կը յառաջանան Շէնքբի միջով դէպի Սէմալ։ Անմիջապէս կրակ կուտան Սէմալն ու Դաշտակը և խումբ մը յեղափոխականներ ու ներկայ գտնուող ժողովուրդ երկու մասի կը բաժնուին,— մէկ մասը Սեպուհի և Մուրադի հետ կը բռնեն Բլրիկ, իսկ միւսը՝ Հրայրի առաջնորդութեամբ՝ կը բարձրանան գիւղի վերևի քարերը և կը պատրաստուին դիմադրութեան։ Կուսակալը իրարու ետևէ հինգ անգամ թնդանօթներ արձակել կուտայ Սէմալի վրայ և զրքերը երկու խումբի բաժնուած՝ կ'արշաւեն դէպի Սէմալ։ Թէև մեր տղայոց դիրքերը անյարմար էին և իրենց թիւը շատ նուազ թշնամու ահագին բազմութեան ու բանակներուն հանդէպ, բայց որպէս զի Սէմալի ժողովուրդը կարող ըլլայ իր կնիկ ու ճիժերը ապահով կերպով անցնել Կէլին, կը ջանան կասեցնել զօրաց ընթացքը։

Երկու կողմէն խիստ հրացանաձգութիւն կըլլայ. թընդանօթները անգամ մըն ալ կ'որոտան և մեր զինուորներ՝ կուին սաստկութիւնը և դիմադրութեան դժուարութիւնները տեսնելով, ալ չեն ուզեր երկար մնալ և—մանաւանդ Սէմալի կանայք ու երեխայք ալ արդէն բաւական ապահով ըլլալով—դէպի ետ կը քաշուին, սարի վրայ դիրքեր բռնելու ու կռիւը շարունակելու նպատակով։

Թշնամին անհամար զրքերը և քրդեր (10-12,000), մեր կուողները իրարմէ կը բաժնեն։ Սարերը ձիւն, դիրքը անյարմար, բայց մեր կտրիճները առանց վայրկեան մը կորսնցնելու, պաղարիւնութեամբ կը շարունակեն կռիւը զանազան կողմերու վրայ։ Կռիւը կ'երկարի Մխիթարայ խորէն մինչև Ալիանցոց գլուխը։ Անձրևի պէս կը տեղայ գնդակները և թնդանօթները անընդհատ կ'որոտան։ Գլուխն գնդակի հարուած մը ընդունելով՝ Զայի մէջ կը նահատակուի մեր անփոխարինելի ընկերը՝ Յեղափոխութեան անվհատ Առաքեալ՝ ՀՐԱՑՐ (Արմենակ Ղազարեան — Դժոխք)։ Անկից քիչ մը վերջ կը նահատակուի Սէմալցի ԿՐՊՕՆ. զինուոր ՄԱՐՏՕՆ ալ ոտքէն վիրաւորուած՝ կը մնայ իր տեղը։

Կուողներէն մաս մը Զայի վրայով կ'ելնեն Կէլիի կողերը, որոնց ետևէ կը խուժէ նաև զօրքն ալ։ Մինչև այս կէտը՝ պատերազմը մեզ համար աննպաստ կը դառնայ։ Բայց երբ չորս կողմէն, Անդրանիկ իր խմբով և ուրիշ խմբապետներ կը հասնին օգնութեան, մեր կուողները նոր ուժ առնելով՝ թշնամին կողմերը կը զարնեն և աւելի կատաղօրէն կը յարձակին զօրքերի վրայ։ Խուճապ մը կըսկսի զօրաց և քրդաց մէջ. կըսկսին փախչիլ դէպի ետ։ Մաս մը զինուորներ կը մնան հովիտի մէջ և անխնայ կը կոտորուին։ Միւսներ ցիրուցան կըսկսին փախչիլ. հայեր կը խուժեն անոնց ետևէն, կը վռնդեն դէպի Զայը, բայց անկից ալ վար՝ դէպի Շէնքբի և Սէմալի աւերակները։ Իրիկուան ժամը 12-ի մօտերը կռիւը կը վերջանայ։ Մեղմէ նահատակուած են, բացի ՀՐԱՑՐԷՆ և զինուոր ՄԱՐՏՕԻՆ, ժողովուրդէն ևս 7-8 անձեր, քանի մը ալ վիրաւորեալ ունինք։ Թշնամիէն ընկած են շատ, լոկ պատերազմի դաշտի վրայ թողած են 30-է աւելի դիակներ և հետերնին առած են ալ աւելի։ Կորուստ տուինք մէկ մօսինի և երկու պերտանկայ. իսկ թշնամիէն բերինք 18 մավզէր, իրենց փամփուշտներով։

Ապրիլ 14-ին թշնամին նոր զօրքեր բերել տուաւ Մուշէն։ Ապրիլ 15-ին 200-է աւելի զօրքեր ու քրդեր արշաւանք գործեցին Կէլիէկուզանի ճիւղ եղող Մերկէր գիւղը, սակայն վայրկեանի մը մէջ ցիր ու ցան ըրինք։ Իշխանձորն ալ վառեցաւ և գեղը պարպուեցաւ։ Տիարբէքիրէն զօրքեր եկան և բանակ դրին հոն. կըսպառնան Տալորիկի վրայ արշաւել։

Ապրիլ 16-ը անձրևոտ ըլլալով՝ խաղաղ անցաւ։ Ապրիլ 17-ն ալ խաղաղ անցաւ, միայն թէ նոր բանակներ հասան Մուշէն։ Բանակը կը թանձրանայ։ Նոր և մեծ արշաւանք մը մօտալուտ է։

ՎԱՀԱՆ

ԿԷԼԻԻ ՊԱՇԱՐՈՒՄԸ

Մուշ, 24 ապրիլ

Ապրիլ 20-ի գիշերն էր, որ թիւրք զօրքը և քիւրդ աշիրէթները ահագին բազմութեամբ յարձակում գործեցին Կէլիի վրայ, որ արդէն պաշարուած էր 10-12 լեռնային թնդանօթներով։ Առաւօտեան ժամը 7-էն սկսեալ թնդանօթները կ'որոտան և հրացանաձգութիւնը քիւրդերու և թիւրքերու կողմէն կը շարունակի մինչև երեկոյ։ Հայերը—ժողովուրդ ու ֆէդայիները — դիւցազնաբար դիմադրեցին։ Առաջին օրը իրենց դիրքերը պահեցին, բայց երբ թշնամին յաջողեց գրաւել Շէնքբ և Սէմալ գիւղերն ու հանդիպակաց բլուրները, այն ժամանակ մերինները ստիպուած եղան յետ նահանջել։

Ապրիլ 21-ին նոյն սաստկութեամբ երկրորդ յարձակում տեղի ունեցաւ։ Նախորդ օրը 125 և երկրորդ օրը 230-է աւելի թնդանօթի ռումբեր ձգեցին պաշարուած հայերու վրայ և բաւական մնաս պատճառեցին։ Թշնամուն կորուստները աւելի եղած են։ Ամսի 21-ին թիւրք բանակը աւելի յառաջացաւ։ Հայ խմբապետները ուժովցուցին իրենց պաշտպանողական միջոցները, բայց թնդանօթներու գործած աւերը այլ կերպ վճռեց խնդիրը։ Աւերմունքը մեծ էր։ Համախմբուած 20,000-ի չափ կիներու, երեխայոց, ծերերու, հիւանդներու լացն ու կոծը՝ անտանելի էր։ Այդ աննկարագրելի տեսարանի հանդէպ՝ բոլոր ողջ մնացած տղամարդիկ, ինչպէս և պետերը՝ Վահան, Անդրանիկ, Գէորգ՝ և իրենց խմբերը ռազմական ուժերը ձեռք առած՝ կը բարձրանան դէպի Անտոքի գագաթները։ Ուրիշներն ալ զանազան բարձրութիւններու դիմեցին։ Զենք գիտեր սակայն, թէ ինչպէս պիտի դիմանան ձիւնապատ սարերու վրայ, առանց պատսպարանի և մանաւանդ ուտեստի պաշարի։ Թշնամին կը շարունակէ հետևիլ անոնց։ Վերջին երեք օրերու մէջ բնաւ լուր չկայ Սասունէն, որովհետև հաղորդակցութիւնը դադրած է այդ կողմէն. նոյնիսկ դաշտի մէջ գիւղ գիւղ հաղորդակցութեան դիւրութիւն չկայ։

Սասունի վերջին կռիւներու զոհերու թիւը դեռ յայտնի չէ, դեռ չէ ճշդուած։ Մերիններու կորուստը թուով անշան է, — կորսնցուցինք, սակայն, թանկագին ՀՐԱՑՐԸ, որի կորուստը շատ մեծ մնաս մըն է Սասունի յեղափոխական գործին։

Երէկ և այսօր սկսան Մուշ բերել Կէլիի ջարդ ու կոտոր ժողովրդի փշրանքները՝ պառաւներ և երեխաներ՝ մերկ, բոբիկ, անօթի, լլկուած։ Իրենց ամէնու. երեսին մահուան դալուկն է նկարուած։ Հարիւրներով կը բերեն ատոնց, շրջապատուած ոստիկաններով և թիւրքերով։ Ողորմելի-ներուն քաշելով կը տանեն կառավարութեան դուռը և արգելքի ներքև կը դնեն, ամէն հաղորդակցութենէ զուրկ, հիւանդ, անօթի... Չեն թողներ ոչ կանանց, ոչ երե-խայոց՝ հայոց թաղեր հաց մուրալու. անօթի և սովամահ պիտի կորչին. կորովիներ կան, որոնք կը փորձեն դիմու�-ներ ընել։ Արդէն հայոց թաղի մէջ տուն մը վարձուած է և կ'ուզեն հոն վերադարձ մաս մը։ Հաղորդակցութենէ զուրկ կը պահեն բոլորին, որպէս զի անցքերու մասին տեղեկութիւններ չտարածուի հայ ժողովրդի մէջ։

ԿՕՄԻՏԷ

ԴԷՊԻ ՏԱԼԻՈՐԻԿ

Մուշ, 2/15 մայիս

Գրեցինք ձեզ արդէն ապրիլ 20-22-23-ի արիւ-նահեղ կռիւներու մասին, որոնք պատահեցան Սասուն, ինչպէս և Կէլիէկուզան գիւղը ապաստանած ժողովրդի ու յեղափոխականներու դէմ՝ 12 վաշտ զօրքերու և բիւ-րաւոր քիւրդ աշիրէթներու յարձակումներու մասին։ Մարտերը, արդարև, մինչև ապրիլ 20, գիւցազնական դիմադրութիւն ցոյց տուին, մէկը գրեթէ 2-300-ի դէմ։ Բայց վերջ ի վերջոյ թուրքերու անհամեմատ բազմու-թիւնը և մանաւանդ հազարաւոր պայթուցիկ ռումբերը, որոնք եթէ չդադրէին, պիտի ոչնչացնէին Կէլիի մէջ համախմբուած Սասունի 45 գիւղերու ժողովուրդը՝ այր, կին ու երեխայ—ստիպեցին յետ քաշուիլ։ Նախ գաղտնի ճանապարհներով, գիշերը փախցուցին կանանց ու երե-խաներու բազմութիւնը, ետքն ալ՝ իրենք հեռացան, թէև ռումբերը կարկտի նման կը թափէին։ Որպիսի տան-ջանքներ...

Բայց ո՞ւր գնային, ո՞ւր ապաստանէին, — ամէն կողմ կրակ, ամէն կողմ թշնամի։ Խմբապետ Վահանի արած կարգադրութեամբ՝ հայ զինուորներու խմբերը կ'ուղեկ-ցէին անպաշտպան կանանց և երեխաներուն, առաջնոր-դելով անոնց դէպի հիւսիս կամ դէպի Շատախ։ Սասունցի կիներէն և երեխաներէն շատ կորուստ կ'ըլլայ մինչև որ կը հասնին այդ վերջին կէտին։ Շատախի մէջ կիները պաշ-պանող տեղեր կուի կը բռնէին քիւրդերու հետ և կը յա-ջողին զանոնք ցրուել, թէև երկու կողմէն ալ շատ մեռ-նողներ կ'ըլլան։ Բօր, Կրմաւ և այլ մի երկու գիւղերու հայերէն մասը մը անմտութեամբ և յիմարաբար պատ-կանցի քիւրդերու կը դիմեն անձնատուր ըլլալու, որպէս զի պաշտպանուին և... կը կոտորուին...

Մեծ աղէտներու է հանդիպեր ժողովուրդը նահանջի ատեն։ Կամուրջէ մը անցնելու ժամանակ՝ գիշեր ըլլալով, տասնեակ կիներ, երեխաներ ու ծերեր վար են գլորուեր ու փշրուեր։ Սասունցի ժողովրդի մեծ մասը ապաստաներ է Տալորիկ. անոնց հետ են Վահանը, Անդրանիկը, Դէ-որգը, մեր զինուորներու կէսին հետ։ Բոլորն ալ ամրացեր են Տալորիկի Կուշիկ ըսուած ամուր լեռը։ Ցաւալի է, որ Կէլիէն հեռանալը այնքան աճապարանքով է կա-տարուեր, որ չեն կարողացեր գիւղը վառել և ատոր համար հոն մթերուած պաշարները (ալիւր, կորեկ, չորցրած հացեր, նոյնիսկ ռազմական նիւթեր) թշնամու ձեռքն են անցեր։

Թիւրք զօրքն ու աշիրէթներ բազմաթիւ խմբերով կը խուզարկեն ամէն լեռնային ծակուծուկեր և ուր որ գտնեն անպաշտպաններուն՝ կը սպանեն։ Երկիրն ալ ձիւնապատ ու ցուրտ է...

Ապրիլի 24-էն ի վեր սկսեցին Մուշ հասնել գա-զանաբարոյ թիւրք ոստիկաններու մտրակներու ներքև՝ Սասնոյ ժողովրդի գերի բռնուած մասը,—կիներ, ծերու-նիներ, երեխաներ... Մինչև հիմա եկեր են՝ 7-800-ի չափ։ Աննկարագրելի տառապանքներ կը կրեն։ Նախ մէկ երկու օրով անօթի, ծարաւ խոնաւ տներու մէջ կը բան-տարկեն, և իբր թէ կը քննեն, ապա կը տեղափոխեն մի այլ խոնաւ տեղ և կը պահեն ոստիկաններու հսկողութեան ներքև։

Տալորիկ ապաստանող հայերու և մեր զինուորներու վիճակի մասին մանրամասն տեղեկութիւններ չկան, քանի որ Սասունը պաշարուած է և հաղորդակցութիւն-ները դադրած են. երբեմն-երբեմն կը լսենք միայն անո-րոշ շշուկներ։ Կ'երևի թէ ընդհարումներ անպակաս են այն կողմ՝ հայերու և թուրքերու մէջ։ Թշնամին նոր ուժեր հաւաքեց. 4-5 վաշտ զինուոր ևս, որոնք վերջերս հեռաւոր քաղաքներէ եկած էին, Սասուն բարձրացան։

Այժմ մեծ կռիւը Տալորիկի վրայ է և երկու օրէ իվեր թնդանոթներու գոռումներ անընդհատ են։ Ապստամբ-ները կը դիմադրեն, և անոնց դէմ՝ անզօր զօրքը հա-զարաւոր ռումբեր կ'արձակէ անմեղ գիւղերու վրայ։ Մարդասիրող վալին յայտարարել է, որ „ռումբերով Սասնոյ լեռներն անգամ պիտի քանդեմ"...

Եթէ հիւպատոսները ժամանակին չհասնեն, կառա-վարութիւնը Մշոյ դաշտին մէջ ալ աւերմունքներ պիտի գործէ։ Գրեցինք, որ Բերդակ թիւրք զօրքերու ձեռքով կանայք և մարդիկ սպանուեցան, տունները այրուեցան։ Մեր զինուորներու մի մասը, Անդրանիկի կարգադրու-թեամբ, Մուշ և Դաշտ իջան, անզէն ժողովուրդը պաշտ-պանելու քիւրդերու և զօրքերու յարձակումներու դէմ։ Դաշտի մէջ 10 կէտի վրայ, ինչպէս և վանքերու մէջ, թուրք զինուորներ լեցուած են և հետզհետէ նոր զօրքեր կը բերեն. կ'ըսեն թէ, Կրուպի թնդանօթներ շարժման մէջ դրած են՝ Դաշտին սպառնալու նպատակով...

Այսօր 35-րդ օրն է, որ Սասնոյ մէջ արիւն կը հոսէ. թիւրք կառավարութեան ծրագիրն էր՝ յարձակումը կա-տարել օր առաջ, որպէսզի հայերը միջոց չգտնեն Ան-տառի անառիկ գիրքերն ապաստանելու։ Այն պարագային յաղթել անկարելի էր...

Ռուս-տաճկական սահմանագլխէն կը հաղորդեն, որ այնտեղ մի քանի ռուս աստիճանաւորներ կը ջանան կա-ռուել քրդերուն, որ ասոնք Սասուն երթան ու տեղե-կութիւններ բերեն այնտեղի գործողութիւններու մասին։ Ամէն կերպ ռուսները կը ձգտեն գրգռել թուրքերուն և քրդերուն հայերու դէմ։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

(Ուղղած Կ. Պոլսի հայոց պատրիարքին)

„Ապրիլ 10-ին, շաբաթ օր ժամը 9½-ին մեկնեցանք ի Սասուն, վեմմ. կուսակալին հետ, ընկերակցութեամբ Բաղէշի ընդհանուր դատախազին, միւմիզին, Մշոյ կա-ռավարչի օգնականին և Բաղէշի խտարէի ժողովոյ երկու հայ անդամներուն։ Նոյն գիշերը իջևանեցանք Ս. Յով-

հանու վանքին ստորոտը գտնուած Հայաքնակ Գըզել Խաչ գիւղը, ուր հասած էին մեզմէ առաջ զինուորական հրամանատար Սալեհ փաշա և զօրաց վաշտեր։ Մուշէն ուղղակի Սասուն բարձրանալու համար ճամբան ձիւնապատ և անանցանելի ըլլալուն՝ հարկ տեսնուած էր Գըզել-Խաչի գծէն վեր ելնել։

„Ապրիլ 11, կիրակի օր ժամը 1-ին խմբովին մեկնեցանք Գըզել-Խաչէն և ժամը 9-ին հասանք Սասնոյ Լաչօքան անուն քրդաբնակ գիւղը։ Հոս հասան նաև Ս. Յովհաննու վանքի վանահայրական փոխանորդ Առաքել վարդապետ Մատաղեան, ըստ մասնաւոր հրամանի վսեմ. կուսակալին, ինչպէս և Կինճի վսեմ. կառավարիչը և նոյն գաւառի պատկանեալ Գուլբի գիւղի գայմագամը։ Երեկոյեան նոյն գիւղին մէջ կուսակալէն կանչուելով և ներկայութեան պատգամաւորութեան անդամոց՝ ցոյց տուեցան 5 վիրաւոր քիւրդեր և քիւրդի մըն ալ դիակը։ Այս մասին թէև տեղեկագիր մը պահանջեցաւ, բայց մենք միայն տեսանք, ուստի և միմիայն տեսած ըլլալնիս յայտնեցինք, առանց երբէք ըսելու թէ որու կողմէն սպաննուած կամ վիրաւորուած են, որովհետև չէինք գիտեր թէ որոնք են սպաննողները։

„Ապրիլ 12, երկուշաբթի օրը, Առաքել վարդապետը՝ ըստ առաջարկութեան հրամանատար փաշային՝ որոշուեցաւ զրկել Սասնոյ կողմերը գտնուող հայերուն մօտ և զրկուեցաւ, հետը տանելով Ձեր բարձր սրբազնութեան մարտ 4 թուակիր ընդարձակ գիրը, մեր կողմէ պատրաստած ապրիլ 11 թուակիր յորդորագիրը և նոյն թուականաւ նոյնիմաստ խրատական մը և ձեր հայրական կոնդակներէ մին։ Առաքել վարդապետ զրկուեցաւ պայմանաւ, որ 6 ժամէն վերադառնայ սակայն տրուած միջոցը անբաւական էր և մեր կողմէ եղած առաջարկութեան վրայ՝ կուսակալը հաղիւ 9 ժամէն վերադառնալու հրաման տուաւ։ Առաքել վարդ. պիտի երթար դէպի Շէնըք և Սէմալ գիւղ, կամ ուր որ կարենար գտնել, որովհետև չէր գիտցուէր թէ ո՞ւր կը գտնուէին ապաստանեալք և ուր պիտի երթար։

„Ապրիլ 13, երեքշաբթի առաւօտեան ժամը 12-ին, մինչ կը սպասէինք Առաքել վարդ. վերադարձին՝ հրամայուեցաւ մեկնիլ Լաչօքանէն և մեկնեցանք պաշտօնական մարմնոյն հետ. մեր առջևէն գացած էր արդէն հրամանատար փաշան, կայսերական զօրքերուն հետ։ Հակիւ թէ Շէնըք հասած էինք՝ թնդանօթի գոռումներ լսուեցաւ, որուն քիչ մը վերջ յաջորդեց հրացանաձգութիւն։ Կէս ժամէն վերջապէս Շընըք հասանք։ Այս գիւղը հայաբնակ գիւղ մըն էր. հոս ալ այս գիւղը հայերու կողմէ այրուած ըլլալու մասին մեզմէ յայտագիր մը պահանջուեցաւ։ Մենք յայտարարեցինք, թէ աչքով տեսածնիս միայն կրնանք յայտնել և ըստ այնմ յայտագրեցինք Շէնըքի տունները այրուած տեսած ըլլալնիս և Սէմալին ալ մխալը միայն։ Վասնզի այրողներուն որոնք ըլլալն մեզի անծանօթ լինելուն՝ որոշ բան մը չենք կրնար յայտնել։

„Նոյն օրը Առաքել վարդ. Ձոր գիւղին մէջ հրամանատար փաշային հանդիպելէ վերջ, ժամը 4-ին հասաւ Շէնըք ընդ հսկողութեամբ և բերուեցաւ ուղղակի կուսակալին մօտ, ուր կը գտնուէինք պաշտօնական մարմնոյն հետ և անմիջապէս հարցաքննութեան ենթարկուեցաւ, որ ըսաւ իր իշխանէին մէջ, թէ զրկուած գրերուն ի պատասխան, սպասուած արդիւնքն յառաջ չէ եկած։ Եւ ըսաւ Առաքել վարդապետ, թէ պահ մը կը մտածուէր զրկուած գրերուն պատասխան տալ գրով, բայց երբ հեռուէն դիտակով կը տեսնուի, թէ զօրքերը տակաւ կը մօտենան իրենց անդադար ու վտանգի ներքև կը համարին զիրենք ալ, Առաքել վարդապետին կ'ըսուի՝ „ելի՛ր գնա՛, ահա՛ զօրքերը գալու վրայ են, ալ ինչ պատասխան է, որ կ'ուզուի" ևն։ Այս բացատրութիւնը գրի առնուեցաւ և Առաքել վարդ. ստորագրած է։ Ամբողջ մարմնոյն հետ մենք ալ ըսած ըլլալնիս ստորագրեցինք յաւելուածով մը։ Ձմռանք յայտնելու, թէ նոյն օր սկսած հրացանաձգութիւնները մինչև երեկոյ կը շարունակուին։

„Ապրիլ 14, չորեքշաբթի, Ս. Կարապետի փոխ-վանահայր Տ. Վարդան վարդ. Յակոբեան և միաբան Տ. Ստեփան վարդ. Պաղտասարեան, երեկոյեան ժամը 12-ին հասան Շէնըք և յանձնուեցան մեր վրանին։ Այս երկու վարդապետները կուսակալը բերել տուած էր զինուորներու ընկերակցութեամբ։

„Ապրիլ 15-ին հինգշաբթի օր, Վարդան ծերունի վարդապետը հարցաքննուեցաւ և իբր թէ պաշար կը զրկէ եղեր ապաստանելոց։ Ատոնք ձրի զրպարտութիւններ են, ըսաւ վարդապետը. ասոր վրայ դատախազի վրանը տարուեցաւ և ամէն յարաբերութենէ զրկուեցաւ։ Յետոյ հարցաքննուեցաւ Տ. Ստեփան վարդապետը և զատ վրանի մը տակ բանտարկուեցաւ և միայն յաջորդ առաւօտ արձակուեցաւ։

„Ապրիլ 16-19 անզբաղ մնացինք և հրացանաձգութիւն չլսուեցաւ։ Սակայն ապրիլ 20-ի առաւօտ ժամը 9-ին, բաղխումը, թնդանօթի և հրացանի ձայները Սասնոյ Շէնըք և Սէմալ գիւղերու դիմացի լերանց վրայէն դարձեալ սկսան լսուիլ անընդհատ մինչև 13 ժամ։ Յաջորդ օրը 3½-էն մինչև 7 լսուեցան նոյն ձայները։

„Առաքել վարդապետի վերադարձէն վերջ ուզեցինք դառնալ ի Մուշ, սակայն կուսակալն թող չտուաւ և ժամանակ վաստկելու համար կայսերական պալատ հարցում ուղղեց։ Յետոյ կառավարչի օգնականին հետ լուր զրկեր էր, որ եթէ մեկնիլ կուզեն, գրաւոր կերպով թող ներկայացնեն, և իր կողմէ խմբագրած գիր մը զրկած էր ստորագրելու և մեկնելու համար. սակայն այդ գրին մէջ մեր մեկնումի խնդրէն զատ ուրիշ պարագաներ ալ կային, զորս մեր ստորագրութեան ներքև առնել կ'ուզէր կուսակալը։ Խնդրանք մերժեցինք և միայն մեր մեկնումի մասին գիր մը գրելով ստորագրեցինք և ապրիլ 21 ժամը 9-ին ճամբայ ելանք Ջրիկ գիւղէն, անտանելի և ահռելի ճամբաներէ, մինչև կէս մէջք ցեխի մէջ։ Գիշերուան ժամը 3½-ին Մուշ հասանք։ Տ. Վարդան, Տ. Առաքել և Տ. Ստեփան վարդապետք ալ իրենց վանքերը վերադարձեր են"։

Վեց ստորագրութիւն
(Մուշի քաղաք. ժողովի անդամներու)

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ
ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՐԼԱՄԵՆՏՆԵՐՈՒՄ

Եւրոպան չըմնաց անգիտակ ու անզգայ, ինչպէս տասը տարի սրանից առաջ։ Ոգևորուելու տեղիք չունենք, իհարկէ —դիւանագիտութիւնը ընդհանուր առմամբ նոյն հակակրելի ուժն է՝ ոճրի դիմաց անշարժ, վարանոտ — բայց տեղիք չունենք և յուսահատուելու։ Տարիների ընթաց-

քում խնամքով պատրաստուած հանրային կարծիքի ապ-դեցութեան տակ՝ դիւանատները, գէթ մի քանիսը, ցոյց են տալիս այժմ որոշ փութկոտութիւն իրենց գործունէութիւնների մէջ:

Անգլիական պարլամենտում, ուր սրանից քիչ առաջ խօսել էին հայկական դատը երկու հեղինակաւոր պաշտպաններ՝ Բրայս և Ստեֆենսն—պետական քարտուղար Պերսի իր առաջին հանգստացուցիչ պատասխանից յետոյ՝ նորերս կրկին անգամ յայտարարեց արտաքին գործերի մինիստրութեան կողմից, թէ բրիտանական կառավարութիւնը իր միջնորդութիւնն է առաջարկել բանակցելու Բ. Դրան և հայ ապստամբների միջև և որ Դուռը ընդունել է այդ:

Իտալական պարլամենտի մէջ պ. Ֆրասկատտիի հարցապնդումից և մինիստրութեան նոյնպէս հանգստացնող մի պատասխանից յետոյ՝ այս օրերս նորից եղաւ հարցապնդում և արտաքին գործերի մինիստրութեան ներկայացուցիչը աւելի որոշ ու կորովի խօսքերով յայտարարեց, որ Իտալիայի կառավարութիւնը վերստին դիմում-ներ է արել սուլթանի կառավարութեան: Լոնդոնում, Հռովմում, Միլանում և Իտալիայի բոլոր կենտրոններում՝ մեր բարեկամները աշխատում են, կոչերով ու միթինգներով, մղել երկու երկրների կառավարութիւններին դէպի ազդու միջամտութիւն:

* * *

Աւելի ուժեղ արձագանք ունեցան Սասունի ցնցումները ֆրանսիական պարլամենտում: Ֆրանսիս դը Պրեսանսէ արտասանեց, յունիսի 9-ին, մէկը այն ճառերից, որոնք ճնշելու չափ հմայում են նոյնիսկ դիւանագիտութեան ներկայացուցիչներին՝ իրենց կուռ տրամաբանութեամբ, փաստերի պաշարով ու դրութեան ներհուն ուսումնասիրութեամբ:

Թէ այդ ճառը, որ իր ամբողջութեամբ մենք կրբերենք „Դրօշակի" առաջիկայ համարում, և թէ մինիստր Դելկասէի պատասխանը՝ սրտապնդող ու յուսատու փաստեր են ներկայ տագնապի մէջ և միաժամանակ շեշտակի պատասխան մեր ժողովրդի այն տականքներին, որոնք արդէն սկսում են աղմկել մթնոլորտը հակայեղափոխական կեղծ երեմիականներով:

Լը Ռուա Բոլիոյի խօսքերը կրկնելով, պարլամենտի առաջադէմ թևերի ծափահարութեան մէջ՝ Ֆրանսիս դը Պրեսանսէ շնորհաւորում ու ջատագովում է հայ ժողովրդին, որ նա „զէնք է վերցրել՝ նեաձելու համար իր ազատութեան տարրական պայմանները":

„Ես չեմ ասում, թէ այդ արիւնոտ ոճրագործները միմիայն ջարդեր են. եղել են և կռիւներ—և ես բարձրաձայն գովում եմ հայերին—եղել են կռիւներ, անհաւասար կռիւներ, քանի որ հայերը գրեթէ անզէն են եղել, բայց դրանք այն կռիւներից են, առանց որոնց մի ժողովուրդ չէ նեաձում իր գոյութեան իրաւունքը":

„Նրանք չուզեցին նահատակուել, ինչպէս 1894-ին, առանց գէթ փորձելու իրենց պաշտպանելու և բողոքելու: Նրանք պաշտպանուեցին ապրիլ ամսից ի վեր, առանց տանելու յաղթանակը, որ անհնարին էր"...

Մինիստր Դելկասէ նոյնպէս պատասխանեց մի ճառով: Միանգամայն ճանաչելով հայերի իրաւունքը ապրստամբելու թիւրք կառավարութեան դէմ, նա յայտարարեց, որ կոտորածի մասին լուրերը չափազանցուած են, որ Պոլսի ֆրանսիական դեսպանի ղրկած տեղեկագրի համաձայն (այդ տեղեկագիրը, որ կազմուած է մայիսի 31-ին, կարդացուեց պարլամենտական ամբիոնից), ոչ մի նմանութիւն չկայ ներկայ անցքերի և 1894-ի ողբերգութեան միջև:

„Սասունի մէջ—ասաց մինիստրը—համախմբուել էին հայ յեղափոխականների կամ ֆէդայիների բազմաթիւ խմբեր, որոնք դրանից առաջ շատ անգամ ընդհարուում էին ունեցել քրդերի ու թիւրք զօրքերի հետ, Մուշում, Բիթլիզում և Վանի շրջաններում:

„Ապստամբութիւնը ճնշելու համար՝ տաճիկ զօրքերը ապրիլի վերջերին հրաման են ստացել շրջապատել Սասունը և վեր են բարձրացել՝ ֆէդայիներին դիմաւորելու...

„Ես պէտք է ասեմ, որ մեր դեսպանի տուած տեղեկութիւնները համաձայնուում են այն տեղեկութիւնների հետ, որոնք ստացած են Լոնդոնում ու Պետերբուրգում: (Ֆրանսիական դեսպանը հաղորդում է իր տեղեկագրի վերջում՝ „օգտակար է, որ մեր գործակալները վերջացնեն տեղն ու տեղը իրենց քննութիւնը անցած դարձածի մասին, որպէսզի այնուհետև կարողանանք միջամտել թիւրք կառավարութեան առաջ՝ խնդրի լիակատար ծանօթութեամբ):

Դելկասէն յայտնում է, որ իրողութիւնները այնուամենայնիւ վրդովեցուցիչ են, որ թիւրք կառավարութիւնը իրաւունք չունի ապստամբների դէմ արշաւելու միջոցին յարձակուել խաղաղ ազգաբնակութեան վրայ:

„Եթէ չէ կարելի մերժել Բ. Դրան՝ ճնշելու ապստամբութիւնը, ապա կարելի է իրաւամբ մեղադրել նրան, որ չընայած բացայայտ յանձնառութիւններին՝ նա շարունակում է պահպանել մի այնպիսի վարչութիւն, որի հանդէպ ապստամբութիւնը հանդիսանում է միակ ապաստանը յուսահատուած ազգաբնակութեան համար":

Այս համարձակ, դիւանագիտական աշխարհին միանգամայն խորթ յայտարարութիւնը յարուցեց պարլամենտում բուռն ծափահարութիւն:

Այնուհետև, մանրամասն խօսելով իր արած քայլերի մասին, մի անգամ ևս շեշտելով նրանց անկեղծութեան ու բարերար ազդեցութեան հանգամանքի վրայ — մինիստրը ասաց, որ ֆրանսիական կառավարութիւնը պիտի կատարէ իր բովանդակ պարտաւորութիւնը":

ՁԻՆԱԿԻՐ ԽՄԲԻ ԸՆԴՀԱՐՈՒՄԸ

Վան, 25 ապրիլի

... Ապրիլ 17-ին, գեղեցիկ ձիերիս մէջքին թռանք վեց ընկերներով, ու արիւնով ողողուած նէիրական հայրենիքի լեռներ ու հովիտներ տեսնելու բուռն տենչով քշեցինք դէպի սահման: Ըստ երևոյթին, թշնամին մեզ լրտեսել էր սկզբից իսկ, որովհետև հազիւ մի քանի ժամ անցած՝ քրդեր նշմարեցինք:

Առաւօտեան անձրև սկսեց և հետևեալ գիշերը մեր ձիերի ոտքերի հետքերը ձգուեցան լանջերի ու հովիտների մէջ: Նախորդ գիշերուայ քրդերը հաւար էին տարած եղել գիւղերը և ահա մեր ճանապարհին երևացին վեց զինուած քրդեր, որոնք ուղղակի գալիս էին դէպի մեզ:

Հեռուից ձայն տվինք, և դուրս եկաւ, որ մեր ծանօթ քրդերն են։ Նրանք լսել էին, թէ աւազակներ են անցել և այդ պատճառով մեզնով հետաքրքրուել էին։ „Եթէ գիտենայինք, որ դուք էք, սկի կը գա՞ինք“, յայտնեցին նրանք։ Եւ դրա հետ միասին խորհուրդ տուեցին մեզ՝ առաջ չգնալ, ասելով, թէ շատ քրդեր արդէն մեր առաջը կտրել են։

Սակայն ո՞վ յետ կը դառնար։ Որոշել էինք, ինչ էլ լինի, առաջ գնալ։ Եւ ծանօթ քրդերի „բարի երթով“ ճանապարհ ելանք։ Այդ գիշերը հատ-հատ ձիաւոր քրդերի միայն պատահեցինք. մի քանի դնդակներ փոխանակեցինք միմեանց հետ, ու նրանք անհետացան շուտով։

Մեր ճանապարհը անցնում էր մի գիւղի վերևից։ Գիւղի պահապանները նկատեցին մեզ. հաւաքը ընկաւ և ճանճերի նման թափուեցին։ Նրանց մէջ կային և զինուորներ, որոնցից մէկը յանդգնութեամբ հասաւ մեր խմբապետին և բռնեց ձիու սանձը։ Խմբապետի հաշտարար խօսքերն ու խորհուրդները զուր անցան. զինուորը պոկ չէր գալիս, իսկ ահագին խուժանը հանում էր մեզ արդէն և սպառնում։ Խմբապետը համբերութիւնն ու յոյսը կտրած՝ հրացանի խողովակը ուղղեց զինուորի կրծքին և արձակեց. զինուորը գլորուեց (վերջը իմացանք, որ հարիւրապետ է եղել), մենք առաջ անցանք։

Արշալոյսին մեզ ձգեցինք Լիմ *) գիւղի վերևի սարը։ Թշնամին հետևում էր մեզ։ Հաւաքը փրթել էր ամեն կողմ։ „Դէ՛, տղերք ջան, գործ բացուեց“, ասաց խմբապետը ժպտալով։ „Դէ՛, քեզ մատաղ, մօտին ջան“, բացականչում էին ընկերներս ու գգուում հրացանի խողովակները։

Մենք պաշարուած էինք չորս կողմից 2-3 հարիւր քիւրդերով, և 35-40 ձիաւորներով։ Իջանք մեր ձիերից, յանձնեցինք ընկերներից մէկին, որը նրանց տարաւ ձոր, և դիրքեր բռնեցինք, հեռադիտակով թշնամու շարժումները դիտելով։ Արևը բարձրացաւ։ Յափշտակուած գեղեցիկ լեռների տեսքով, աղատութեան երգեր էինք մրմնջում... իսկ սրտերիս մէջ վրէժն ու զայրոյթը պայթել էր ուզում։

Վերջապէս հովիւները նկատեցին մեր ձիերը։ Քրդական հաւաքը սկսեց արձակուած մի քանի դնդակների հետ։ Թողնենք որ մօտենան։ Ձիաւորները սրարշաւ գալիս էին, բայց երբ մեր դնդակները գլորեցին մի քանիսին՝ ստիպուեցին կանգնել։ Նրանք էլ դիրքեր գրաւեցին։ Եւ ոլքա՞ն տարբերութիւն թէ։ Մեզանից իւրաքանչիւրին 40-50 հոգի էր ընկնում և մարթինի ու բէրդանի դընդակները վժվժում էին մեր շուրջը։ Մենք դնդակ չէինք արձակում զուր տեղ, պահելով այդ վճռական րոպէին, քանի որ թշնամիները շարունակ առաջ էին նետուում յիմարաբար։

Ազատուելու յոյսը քիչ կար „Սիրտերդ պինդ պահեցէք, փամփուշտ շատ կայ. կեցցէ՛ Դաշնակցութիւն“, գոչեց ընկերներից մէկը։ Եւ նոր կատաղութեամբ գոռացին մեր մօտիները։ Ապահովաբար մեր ձիերը վրտանգի մէջ էին այժմ։ Թշնամին աշխատում էր գրաւել նրանց. մենք դժուար դրութեան մէջ էինք—ձիերին պաշտպանէինք թէ՞ մեզ։

Մեր ձիապահ ընկերը արդէն սանձերը թևերն անցրած՝ աջ ու ձախ դնդակներ էր արձակում. մնում էր մի վճռական քայլ անել։ Մեզանից մի քանիսը նետուեցին դէպի բեռները և դնդակների տարափի տակ ինչ կարելի էր բարձրացրին դէպի մեր դիրքը։ Ձիերից մէկը խրտնեց ու անցաւ թշնամու ձեռքը. մեր ձիապահ ընկերն էլ հասաւ մեզ։ Այդ ժամանակ ձիերը փոխանակ թշնամուն թողնելու, լաւ համարեցինք մեր ձեռքով սպանել, ու այդպէս էլ արինք։

Այդ միջոցին մեր ընկեր վանեցի ՅՈՎՀԱՆՆԷՍը, տաքացած՝ դուրս նետուեց դիրքից և ճակատ առ ճակատ կանգնեց թշնամու դիմաց։ Շատ չանցած՝ քաջը թշնամու դնդակին զոհ գնաց։ Մենք համբուրեցինք մեր թանկագին ընկերոջ արիւնլայ գլուխը, առինք հրացանն ու փամփուշտները և մարմինը պատսպարելով քարերի մէջ, նետուեցինք թշնամու շղթայի վրայ յաշողութեամբ ճեղքեցինք ու անհետացանք։ Մի քանի ժամ վերջ Վանից հարիւրից աւել զինուոր էին հասել, բայց մեր հետքը արդէն կորած էր...

Սարսափը ահագին է. թշնամին տրամադիր է կարծել, որ մենք 100-150 հոգի ենք եղել։

Այժմ բոլորս ապահով մեր ուզած տեղը, ընկերների մօտ ենք։

Հ.

*) „Դրօշակի“ անցեալ համարում (երես 51, տող 4-րդ) սխալմամբ տպագրուած էր Լիմ կղզում փոխանակ գիւղում։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ, 25 յունուար

Գիւղ չկայ, որ զապթիա, չաւուշ ու հարկահաններով լեցուած չլինի։ Գիւղացին անկարող լինելով այդ օրինաւոր ու ապօրինի բոլոր հարկերը վճարել՝ դիմում է սալաֆի, որը հիմնովին քանդում է նրա գոյութեան հիմքը, գերի է դարձնում այս ու այն սրիկայ պաշտօնեային։ Հարկերին թիւ չկայ։ Վերջերս էլ աւելացել են անասունների և անձնական հարկեր 5-1000 դահեկան, որոնք անխտիր հաւաքւում են՝ քրդից, թիւրքից ու հայից, որ և դժգոհութիւնների և խլրտումների առիթ է դարձել։ Բացի դրանից, վայրենի պաշտօնեաների խումբեր գիւղ գիւղ, գաւառէ գաւառ հնուց բարդուած տուրքերն են հաւաքում։ 8-20 տարուայ բախկեա է մնացել ժողովրդի վրայ. շատերը վճարած են բոլորը, սակայն անցեալում կառավարութիւնը ընկալագիր (քօչան) տալու սովորութիւն չունէր, պատահողը հաւաքում էր տուրքերը և անցնում, որի շնորհիւ այժմ վճարողը չէ կարող ապացուցել, որ վճարած է։ Եւ կայքից, ապրուստից զուրկ ժողովուրդը դէմ առ դէմ կանգնած է անհամար հարկեր վճարելու ստիպողականութեան առաջ, իսկ չունևորը փտում է բանտերում, ենթարկւում է գազանային տանջանքների և վռնդւում է գիւղից։ Գիւղերում հարկերի սարսափը առ ժամանակ գոնէ հեռացնելու համար՝ ժողովուրդը պարգևներով հեռացնում է հարկահաւաքների խումբը, բայց չանցած մի քանի օր, մի ուրիշ խումբ է յայտնւում, որին ևս նոյն ձևով հեռացնում են և շարունակւում է այդ ձևով. այդպիսով շատ անգամ գիւղացիք վճարելիք հարկերի կրկնապատիկ պարգևներ են վճարում։

Ստորին Կարկառում Թացու անունով մի գիւղ մայ պատահաբար։ 60 տուն բնակիչ ունի, որոնց ընդհանուր հարստութիւնը 15 եզ է։ Իրենք կերակրւում են գարիի և տարեկանի հացով. կառավարութիւնը այդ գիւղից

800 ոսկու բախկեա պահանջ ունի, որը մշտական պաշտպանակ է ծառայում երթևեկող պաշտօնեաների համար։ Խիզնայ շէյխի և կառավարութեան ճնշումներից երկու ամբողջ գիւղ վերջերս թողին տուն, տեղ և իջան Գավաշ ապաստանելու։ Շատ տեղեր գիւղերից փախչում են բոլորը՝ թողնելով ընտանիքը անտէր ու անօթի. իսկ հարկահաւաքների սխրագործութիւնները արդէն կարող էք երևակայել և շատ անգամներ էլ գրուած է։ Երկու օրինակ թող բաւեն այս անգամ.— Թիմար գաւառի Տըրլաշէն գիւղն է մտնում՝ գիւղի կապալառու Աղա բէյ՝ հարկահաւաքների հետ. անխնայ ջարդի են ենթարկում հանդիպողին. գիւղի գլխին ամբողջ մէկուկէս ժամ ձեռները միացրած կախում են առաստաղից և ամբողջ 11 օր մնում են գիւղում։ Այդ օրերի ընթացքում մորթուում է 56 հաւ, դրա համեմատ իւղ, ձաւար, պանիր և լն. 5-6 կանայք բողոքելու համար ջարդուում և բանտարկուում են 2 օր, մի ջրաղացպանի դէմքը արիւնլայ են անում մտրակի հարուածներով ու անցնում են Էրէրին գիւղ ու ապա Ալիւր, որտեղ հարկերը լիովին չստանալու պատճառով՝ կտրում են 100-150 պտղատու ծառեր ու ցուկներ։ Մի կողմն եմ թողնում Ալճաւաղ գաւառը, որտեղ Քէօռ Հիւսէյն փաշան ոչինչ չի թողել, ոչ ոքի չէ խնայել։ Նորերս էլ իւրաքանչիւր հայ գիւղի վրայ 1-2 քիւրդ ընտանիք է բաժանել՝ հսկելու համար գիւղացոց վրայ և ապրելու նրանց հաշուով։ Իսկ Խլաթը իր հռչակաւոր „կռտան“ Ալի բէկով, արդէն յայտնի է։ Դա ֆէդայիների մահացու թշնամին է. մի քանի տարի առաջ ֆէդայիներ պատսպարելու մէջ մեղադրելով մի քանի տասնեակ հայերի, կռտել է նրանց, այդպիսով ստանալով իր „կռտան“ մականունը։

—

Ա.Լ.Ա.Շ.Կ.Ե.Ր.Տ., 2 փետրուար

Արձանագրում ենք մի քանի դէպքեր։

Երանոս գիւղացի Յակոբը սայլով Գարաքիլիսէ գնացած ժամանակ՝ ճանապարհին հրացանի գնդակով վիրաւորուում է նոյն գիւղի բնակիչ քիւրդ Մէհէյի որդի Բաղէյի ձեռքով. յանցաւորը ազատ է։ Բողոքը ոչինչ է՛օգնեց։

Թօփրագգալէում քրդերը յարձակուել են Զքոյեանի ոչխարենի դոմի վրայ և տարել են 150 հատ ոչխար։ Քրդերը բացարձակ շառ ու շուռ են սկսել. Գարաքիլիսէի խանութներից զանազան պատրուակաւ դրամներ են կորզում մէկը միւսի համար վկայ կանգնելով։ Հիւսէյն փաշայի ծառաներից Ալի անունով մէկը, որ Խըտրը գիւղ (այժմ 20 տուն հայից մնում 3 տուն) կը մնայ, ամէն վնասներ է հասցնում բնակիչներին և միշտ մնում է անպատիժ։ Թիւրքերը նոր սպառնալիքներ են կարդում ժողովրդին, այնպէս որ շատերը ստիպուած են գիւղից դիւղ անգամ չգնալ։

Համիդիէ զինուորներն էլ ապրուստ չթողին գիւղերում. տանում են խոտ, վառելիք, ուտելիք։ Օգտուելով հանգամանքից՝ իրենց սեփական ոչխարները բերել են և պահում են հայ գիւղերում, ապրեցնում են հայի ունեցած միջոցներով։ Նոյն բանն անում են և կանոնաւոր զինուորները, որոնցից իւրաքանչիւրը 20-30 ոչխար է պահում։

Երկու Գարաքիլիսեցի հայ երիտասարդներ, իբր թէ արտասահմանից վերադարձած, զօրքերի ձեռքով սպանուած են Յամատ գիւղում զինուորական զօրապետի կարգադրութեամբ։ Դժբախտ սպանուածների հանդերձները զինուորները վաճառքի էին հանել հայ գիւղերում։

Վ.Ա.Ն., 20 յունուար

Բամազանի օրերին քաղաքի բոլոր թաղերը լեցուած էին ոստիկաններով և հարկահաւաքներով. բամազանը հարամ եղաւ և տաճիկ բնակիչների գլխին։ Հարկահաւաքների խումբը հալածում էր առաջներից փախչող անցորդներին։ Պատահողը ձեռներից չէր ազատուում. շրջապատած՝ խուզարկում էին գրպանները, հանում ու յափշտակում էին դրամը, իսկ չունեցողներին առաջնորդում էին բանտ, հանում էին հագուստները, ասելով. „փաշան նեղ ապրի ինչ է դուք լաւ հագո՞ւստ պիտի հագնէք“։ Թիւրքը թէ հայ բնակիչները երկիւղից գիշերներն անգամ տուն չեն գնում. եղան շատ անգամ գիշերային յանկարծական խուզարկութիւններ (այդպիսով մտադրուած լինելով և յեղափոխականներ գտնելու)։ Հարկահաւաքների խիստ ու վայրենի վերաբերմունքը արձագանք է կառավարութեան պահանջների։ Մի հարկահան Մարկոս ունինք, որը ամէն իրիկուն եթէ նախորոշած դրամը չտանէ ոստիկանապետին՝ սարսափելի կը գանահարուի, և հետևեալ օրը իր ամբողջ զայրոյթը եռանդով կը թափէ իր ազգակիցների վրայ։ Կառավարութիւնը դրամական տագնապի մէջ կ՝երևի. պաշտօնեաներ ռոճիկներ չեն ստացել։ Փաշան հրամայել էր ամենակտրուկ, անխտիր միջոցներով կազմել որոշ գումարը, միայն պիտի զգուշանալ, որ օտար հիւպատոսներ և եւրօպացիներ չնկատեն այդ։ Սակայն, ինչպէս այդ երևաց, շատ էլ զգուշ չէին գործում, մինչև այսօր էլ հարիւրաւոր մարդիկ գանգատուում են. որի վերարկուն են հանել, որի շալը արձկել, թաշկինակը ու ժիլետը խլել. մինչև անգամ գերպաններից համրիչներն են հանել և մէջքերից փոկեր են արձակել ասելով, „տաս փարա արժէ խօ“։ Իսկ այդ բոլորը բնորոշելու համար կը բերեմ երկու դէպք, որ բոլորին յայտնի է։ Նորաշէնի եկեղեցու առաջ մի փինաչու խանութ կայ, որ պատկանում է մի թշւառ մարդու։ Հարկահանները մօտենում են խանութին. „հը՛, քեզ վրայ 60 ղրշ. է հաշուած, տո՛ւր“, „սպասեցէք գալ ամսին“, աղաչում է մարդը։ Առանց երկար սպասելու, քաշում են ծեծի, ցան ու ցրիւ են անում խանութը, բայց առանց մի բան ստանալու չեն հեռանում։ Կօշկակարի շալվարը բաւական նոր է լինում, նրանք հրապարակով հանում են շալվարը և հեռանում ասելով. „Այս 5 ղրշ.-ի տեղ միւսն էլ պատրաստիր կը գանք յետոյ“։ Արարուց հրապարակի վրայ պատահում են մի խեղճ արհեստաւորի, պահանջում են հարկ, խուզարկում են նրան, ոչինչ չեն գտնում և ճարահատեալ հրաւիրելով մի անկիւն՝ հանում են բոլոր հագուստները, բարեխղճաբար թողնելով նրան միայն ճերմակեղէնը. ցուրտն էլ սաստիկ էր, մարդը կարծեմ մինչև այժմ էլ պառկած է հիւանդ։ Այդ լոբերի սրիկայութիւնները գործադրուում են և թիւրք աղքատ ու թշւառ ժողովրդի վրայ, որով գրգռել են բոլորին։

—

Կ.Ա.Ր.Ի.Ն., 20 մարտ

Բասենի ծոցը տեղի ունեցած անմոռանալի դէպքերը կառավարութեան մտածումները բոլորովին փոխեցին հայ ժողովրդեան վրայ։ Տաճիկ և քիւրդ հասարակուութեանց ահն ու սարսափը աննկարագրելի էր. անյապաղ կը խորհէին զերեկը և ընտանիքին պաշտպանելու միջոցներ ձեռք բերել. շատերն ալ հայրենիքին

ձգելով՝ փախչելու և ճար մը որոնելու պատրաստութեան մէջ էին։ Իսկ գիշերները բոլոր գիւղերու մէջ տղամարդիկը զինուած՝ տուներու տանիքները և գիւղերու շրջակայքը ման կուգային։ Երևակայելու է թէ սրտերնին ո՛րքան պիտի տրոփէր, եթէ յանկարծ տեղէ մը պայթոց մը լսէր... Այնքան բարձր էր ֆէդայիներու համբաւը, որ նոյնիսկ քրդերը կը զգային ըսելով՝ „կարելի է մեր յանցանքը մեզ կը պատժէ. մեր գնդակները անոնց չդպիր, բայց անոնցը գլուխնիս դեռ դուրս չհանած՝ ճակատնուս կը փակէի“։ Եւ դեռ դրանից էլ աւելի առասպելական լուրեր են, որ կը պտտին մահմէտական ամբոխի մէջ...

Բայց հէնց որ հայ քաջերը հեռացան Գոմաձորէն, գազանաբարոյ Թիւրք կառավարութիւնը նորէն ոտքի կանգնեցուց հայու թշնամիներուն. քիւրդն ու զօրքը անհամար քանակութեամբ լեցուեցան գիւղը։ Տեղի ունեցան այնպիսի բարբարոսութիւններ անպաշտպան ժողովրդին դէմ, որ վերջինները բոլորովին յոյսերը կտրած՝ ապշութեամբ կը նայէին թշնամոյն կատաղի և դաժան դէմքերին։ Անխնայ կերպով խոտերու դէզերը ցրուեցին և գարիներու ամբարները բացին ձիերուն կերցնելու համար։ Ամբողջ տարեկան ուտեստը գրեթէ սպառեցին։ Երբ փաշային վստահացուցին ֆէդայիներու մեկնումը, ակամայ ստիպուեցաւ գալ և գիւղացոց պաշտպանութեան համար իբրև թէ միջոցներ ձեռք առնել։ Գոմաձորի վիճակին ենթարկուեցաւ Իւզվերան գիւղն ևս. հոն ալ արդէն մէկ օր առաջ սկսած էին տաճկի անխիղճ և կամակոր բռնութիւնները։

Նոյն փաշան սկսեց վերոյիշեալ երկու գիւղերու մէջ աչքի ընկնող հայերը ծեծել։ Քահանաները և իշխանները անարգելէ և ծեծելէ վերջ, շրջակայ տաճիկ գիւղի բնակչաց մատնութեամբ՝ քսան հոգի աչքի ընկնող երիտասարդներ ձերբակալուեցան և մինչև այսօր կը տքնին բանտերու խորշերը անպաշտպան կերպով։

ԲԱՍԵՆ, 25 մարտ

Կացութիւնը օրէօր կը ծանրանայ բարբարոսներու ճնշումներով ու բռնաբարութիւններով։ Տեղի ունեցան արդէն շատ մը հարսներու և կոյս աղջիկներու վերաբերմամբ անօրինակ լրբութիւններ։ Ալիճագրակ գիւղի բնակիչ հայ երկրագործի մը կոյս աղջիկը համիդիյէ չավուշի մը ձեռքով առևանգուեցաւ և տարուեցաւ Վէլիպապայ գիւղը. փաշայի և զօրապետաց միջնորդութեամբ հաւատակից ըրին իրենց՝ կնութեան տալով յիշեալ չավուշին։ Մեծ ուրախութիւններ և շնորհաւորութիւններ կար այն օրը մէջերնին, երբ իրենց ազգին վրայ անհատ մ'ալ աւելցուցին։

Յիշեալ երկու գիւղերուն բախտակից էին ամբողջ Բասենի հայաբնակ գիւղերը. չարագործները խրախոյս առնելով, սկսեցին գիւղերի ոչխարների հօտերը և տներու մէջէն աչքի ընկնող ապրանքները, շատ ձիեր և անասուններ խլել և տանել։

Անցեալ փետրուար ամսոյ 10-ին խուզարկուեցան գաւառիս մէջ քանի մը գիւղեր՝ Կարնոյ և գաւառիս փոխիներու և ոստիկանապետի միջոցաւ. տներու անկիւնները և կահ-կարասիները խարխափելով՝ մանրամասնօրէն կը զննէին, կանանց և աղջկանց ծոցերն իսկ կը շօշափուէին անբարոյական ձեռքերով։ Հասկցուեցաւ մտադրութիւնն ու փնտուածնին։

Կառավարութիւնը պատրաստութիւններ կը տեսնէ Սասունի հայերու դէմ։ Կարինէն կը ղրկէ Բասենի Հերթա գիւղէն Թագմանի գծով դէպի Խնուս՝ զօրքեր, զէնքեր և բաւականաչափ ռազմամթերք։ Արդէն գնացին դէպի այն կողմը 1,300 զինուոր և 80 ձիաբեռ զէնք և մթերք։ Մշոյ մէջ պատրաստութիւնները, կ'ըսեն, եռանդով կը տեսնուին...

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱՄԱԿ ՔՂԻԷՆ

Ինքնապաշտպանութեան արդիւնքը. Շինծու լուրեր. Հայտար պէյի խօսքերը. — Հայեր եւ քիւրդեր. — Հայ մատնիչներ.

20 մարտ

Ժամանակները փոխուած են։ Ընդհանուր կոտորածին, երբ Բալուի Թիւրքը և շխասանցի քիւրդը Քղեի շատ մը տեղեր աւարի տալով՝ մեր Խուփուս գիւղը եկան (Խուփուս 400 տուն զուտ հայաբնակ գիւղ մըն է), Տէրսիմի Խուզուջան գաւառի Շահուսէյն պէյի տղան, Հայտար պէյը, որ Թիւրք կառավարութենէն գայմագամութեան պաշտօն ալ ունի, իր մարդիկներով մեր գիւղը եկաւ և մեր քանի մը հայ երիտասարդներու հետ դիմադրեց խուժանին։ Թիւրքերը և քիւրդերը երբ տեսան որ մեր գիւղը ինքնապաշտպանութեան կը դիմէ՝ իրենցմէ քանի մը քիւրդ և Թիւրք մեռած ու վիրաւոր թողնելով գացին։ Շնորհիւ Հայտար պէյի և մէկ քանի Հ. Ց. դաշնակցականներու՝ գիւղը այն անգամ կոտորածէ և կողոպուտէ ազատեցաւ։

Բայց հիմա ամբողջ Քղեի Թիւրքերը բերնէ բերան կը խօսին թէ, գարունը սկսելուն պէս հայ ջան-ֆէդայիները Էրզրումի, Բասենի, Հասան-գալէյի կողմերէն մեր վրայ պիտի յարձակին, պայթուցիկ նիւթերով պիտի կործանեն քաղաքապետութեան շէնքերը, զօրանոցները և զինու զօրութեամբ պիտի տիրանան կարևոր դիրքերու... Եւ այսպէս շատ մը բաներ կը խօսի հրապարակի վրայ և միշտ գաղտնի ու խորհրդաւոր կերպով...

Քանի մը օր առաջ Քղի քաղաքէն նշանաւոր Թիւրք պաշտօնեայ մը՝ Ահմէդ Սէիդ՝ կը խոստովանէր թէ, այս բոլորը սուտ տարաձայնութիւններ են Թիւրքերու կողմէ հնարուած՝ իսլամը քրիստոնէին դէմ գրգռելու նպատակով, քանի մը անձերու շահու աղբիւր բանալու համար։ Այս տարաձայնութիւններու վրայ տեղւոյս երիտասարդներէն քանի մը հոգի Խուզուջան Հայտար պէյին գնացին, որ Տէրսիմի ամենէն նշանաւոր, ազդեցիկ և հարուստ ցեղապետն է, և բացատրեցին որ տարաձայնութեան աղբիւրը Թիւրք կառավարութիւնը ինքն է։

Հայտար պէյը բացէ իրաց ըսաւ՝ „Մենք սկզբին Թիւրք կառավարութեան աչքին առջև ինքնիշխան ցեղ մըն էինք, բայց Տէվրիշ փաշան ժամանակին մեր պապերու օրով սուլթանի հրամանով Տէրսիմը նուաճելու եկաւ. Թիւրք փաշան մեզի եկաւ, բայց մենք, զգա՛ցեղերս, Թիւրք կառավարութեան ոչ տուրք, ոչ զօրք կուտանք և ոչ ալ կ'ուզենք կառավարութեան ձեռքը գործիք դառնալ և նեղել մեր դրացի հայերը։ Հակառակ պարագային՝ եթէ խռովութիւն ծագի, ինչպէս անցեալ տարի, հիմա ալ պէտք եղած տեղերը հայերը պիտի պաշտպանեմ“։ Հայտար պէյը բարեկամական նշան մը ցոյց տալու համար երկու գիրացուցած ոչխար նուէր տուաւ հայ երիտասարդներուն՝ որոնք լի յոյսերով վերադարձան Խուփուս։

Տէրսիմի զաղա քիւրդը իր դրացի հայուն համար պաշտպան կը կայնի, իսկ մեր հարուստ հայը կը լքէ իր ազգակից եղբայրը, ձեռքէն եկած ամէն վատութիւն կ'ընէ՝ կառավարութեան աչքին սիրելի երևալու համար։ Թէ գիւղերու և թէ քաղաքին մէջ պակաս չեն այս տեսակ վատերը։ Պանքայի ցոյցէն վերջ կառավարութիւնը բաւական թուով քղեցի երիտասարդներ աքսորեց Կ. Պոլսէն Քղի, բոլորն ալ Հ. Յ. Դաշնակցութեան ուխտածներ, որոնք եկան և յեղափոխութեան գաղափարը տարածեցին, աւելի ևս ոգևորուած։ Բայց հայ էարէքիի ու հայ փոլիսաճիի հաշուին չէր գար ասոնց պրօպագանդը և սկսան վատութիւն ու մատնութիւն ընել։ Ատոնցմէ ամենէն նշանաւորներուն մի քանիսի անունը հարկ կը համարիմ յիշել հոս. Սերկեվիլի մէջ՝ փոլիսաճի Յակոբ աղա, Խուփուսի մէջ՝ Մկրտիչ և Կարապետ Խոշմաթեան, Միսաք և Նշան Փոսփոյեան, Նուրադ և Սարգիս Մուրատեան. քաղաքէն՝ Օհաննէս Աճէմեան և Մարտիրոս Ալիմեան,—ահա այդ սրիկաններն, որ մատնութեան առաջ անգամ կանգ չեն առներ և ամէն վատութիւն կ'ընեն խեղճ ժողովուրդին դէմ։ Եթէ այս յայտարարութիւնը իրենց հասցէին ղրկած քիչ ըլլայ և չ'աշխատին իրենց ըրած վատութիւններէն զղջալ, այն ժամանակ կը պարտաւորինք տեղական հողի վրայ պէտք եղածը կարգադրել։

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԽԱԲՐԻԿՆԵՐ

(ՔՍԱՆՈՒԹԵՐՈՐԴ ՆԱՄԱԿ)

Ս. Պետերբուրգ, 5 յունիսի

Խօսքը տանք հակառակորդին։

Եւ այս անգամ ոչ մի յարձակում, դատողութեան ոչ մի փորձ և ոչ էլ խորհրդածութեան ցանկութիւն։ Թող խօսի ինքը կառավարութիւնը,—իր սեփական լեզուով, խորը սրսից։ Պաշտօնագիրը —նրա լեզուն է. իսկ գաղտնի վկայագիրը—նրա սրտի զեղմունքը, ազատ ու անկեղծ։

Հակառակորդի դիմակը պատռելու համար երկու միջոց կայ,—կամ քննադատել նրա արարքներն ու քայլերը և կամ թոյլ տալ, որ նա ինքը խորհրդածէ բարձրաձայն, սրտի խորքից, համոզուած, որ ոչ ոք նրան չէ լսում և չէ լսելու։ Եւ այդ գաղտնի դոկումենտների մէջ, որ բերում ենք ներքև՝ բառացի, հարատաղ թարգմանութեամբ, ինքը հակահայ-հալածամոլ բեժիմն է, որ դուրս է թափում իր վարագուրած վախն ու սպառնալիքը, իր „սրտի զեղմունքը“։

Ահա „զեղմունքի“ այդ շարանը.

Ն. Գ. Մ. — ԳԱՂՏՆԻ

ԵՐԵՒԱՆԻ ԺԱՆԴԱՐՄԱԿԱՆ

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

1904 թ. ապրիլ 29

ԵՐԵՒԱՆ

Ստացած տեղեկութիւններին նայելով՝ մօտ 250 ասասունցի հայեր՝ թիւրքիայից անցել են Երևանեան նահանգի սահմանները։ Դրանցից 50 հոգի մնացել են Սուրմալու գաւառում, հայկական գիւղերի մէջ, իսկ մնացածները գնացել են Երևանեան նահանգի այլ գաւառներ։ Այդ բոլոր հայերը զինուած են և եկել են այն նպատակով, որ հայ երիտասարդներից յեղափոխական խմբեր կազմեն։ բայց արդեօք դրանք Թուրքիա կ'երթան թէ կը մնան Երևանի նահանգում՝ անկարգութիւններ առաջ բերելու համար — դեռ ևս պարզուած չէ։

Գլխաւոր գործիչները՝ յեղափոխական խմբեր կազմելու և դրամ հանգանակելու համար, են՝ Սուրմալուի գաւառի Իգոր գիւղի բնակիչներ—Արտաշէս Պահլաւունի, որը է և նախագահ յեղափոխական կոմիտէի Իդդիր գիւղում, „Հազարապետ“—Արտաշէս Սուսանով, և Վաղարշակ, որդի Սահակ Բաղդասարեանի, որը է և նախագահ մի այլ շրջանի կոմիտէի՝ Սուրմալուի գաւառում։

Վերոյիշեալի մասին հաղորդում եմ ի գիտութիւն Ձեր, որպէսզի հարկաւոր վերահսկողութիւն հաստատէք ձեզ յանձնուած շրջանի մէջ՝ այն դէպքում, երբ Երևան կը գան ասունցի հայեր՝ հայ երիտասարդներից յեղափոխական խմբեր կազմակերպելու նպատակով։

Ստորագրութիւն

Ն. Գ. Մ. — ԱՄԵՆԱԳԱՂՏՆԻ

ԵՐԵՒԱՆԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ

ԴԻՒԱՆԱՏՈՆ

1904 թ. յունուարի 12

№ 34

Կովկասեան քաղաքացիական մասի կառավարչապետի դիւանատունը ստացած տեղեկութիւնների համեմատ՝ թիւրքայ կառավարութիւնը բոլոր ոյժով և միջոցներով աշխատում է մի կողմից հաստատել թիւրքիայում բարեկամական յարաբերութիւն հայերի և տաճիկ ազգաբնակութեան ու թիւրքայ իշխանութիւնների մէջ, իսկ միւս կողմից՝ ռուսահպատակ հայերի ու թիւրքերի մէջ առելութիւն զարթեցնել դէպի մեր կառավարութիւնը։

Այդ նպատակով ուղարկուում են Կովկասի ամէն կողմերը թիւրքիային անձնուէր գործակալներ, որի հետևանքը եղաւ կառավարչապետի կեանքի դէմ կատարած փորձը։ Դրա հետ միասին ուղարկուում են և տաճիկ ագիտատորներ, որոնք իրենց հետ ունեն կոչեր և սրբազան դրոշակներ։ Այդպիսի միջոցներով թիւրքայ կառավարութիւնը ձգտում է տարի կանգնեցրնել Ռուսաստանի դէմ Կովկասի ամբողջ հայ և թիւրք աղգաբնակութիւնը և դրանից օգտուել ներկայ տարաբաղդամին՝ երբ, համաձայն թիւրքերի մէջ թագաւորող համոզման, Ռուսաստանի և Թիւրքիայի մէջ պատերազմ պիտի լինի։

Յայտնելով այդ մասին Ձերդ բարեծնդութեան, խնդրում եմ լրջօրէն հետևել յիշեալ անձանց երևալուն Ձեզ յանձնուած շրջանում և դրանց երևալուն պէս՝ անմիջապէս տեղեկացնել ինձ։

Նահանգապետ՝ ՏԻԶԵՆՀԱՈՒԶԷՆ

Դիւանապետ՝ ՉԱՐՉԵՆԿՕ

Զ. Ժ. Վ. — ԿԱՏԱՐԵԼԱՊԷՍ ԳԱՂՏՆԻ

ԶԻՆԻՈՐԱԿԱՆ

ՆԱՀԱՆԳԱՊԵՏ

ԳԱՂՏՆԻ ԲԱԺԻՆ

1904, ապրիլի 9

Վստահելի աղբիւրներից ձեռք բերուած տեղեկութիւններին նայելով, թիւրք իշխանութեանը փոքր-ասիական նահանգներում, որոնք բնակեցրուած են հայերով, դեռ անցեալ տարուայ ձմեռը յայտնի եղաւ, որ հայերը ձեռք են բերել ահագին քանակութեամբ զէնքեր, փամփուշտներ և պայթուցիկ ռումբեր, ոչ դատակ ունենալով խառնակութիւններ առաջ բերել և կուռ բռնել թիւրք կառավարութեան հետ, ներկայ թուի գարնանից սկսած։ Ամենավտանգաւոր և անմատչելի կենտրոնը, առատ լեռներով և անտառներով, որտեղ ներկայումս հաւաքուած են 17 հազար զինուած հայեր, համարում է Սասունը։ Թիւրքայ կառավարութիւնը վճռել է սչնչացնել Սասուն հաւաքուած հայերին, եթէ միայն կուսակցութիւնների պարագլուխների հետ սկսած բանակցութիւններով՝ վերջինները չը համաձայնին զէնքերը յանձնել։ Այդ պատճառով թիւրքայ զօրքերը կենտրոնացուում են Սասունի շրջանը և տեղեկութիւններին նայելով, մօտաւորապէս այս ամսի կիսից, կամ մի քիչ ուշ՝ կը սկսի նրանց ընդհարումները Սասունի ապատամբների հետ։

Վերոյիշեալը յայտնի է շարժման պարագլուխներին Ռուսաստանում և Հայ ազգաբնակութեան, և այդ պատճառով պարագլուխները վճռել են օգնութիւն հայցնել Սասունին զինուած խմբերով։ Երբ դրանք ճանապարհին պատահեն թիւրքայ զօրքերին, այն ժամանակ տեղական Հայ ժողովրդի աջակցութեամբ պիտի ընդհարուեն նրանց հետ, որպէսզի այդպիսով հեռացնեն նրանց ուշադրութիւնը Սասունից և թուլացնեն սասունցիների դէմ ուղղուած հարուածը։ Խմբերը, բաղկացած ամեն մէկը մինչև երեք հազար հոգուց, պիտի անցնեն թիւրքիա, մնասուրապէս այս ամսայ կէսին՝ կամ քիչ ուշ երբ սահմանագլխի լեռնաշղթան անցնող ճանապարհը ձիւնից կ՚ազատուի, հետևեալ երեք դծերով, — երկուսը՝ Կաղզուանի շրջանի վրայով (նրանցից մէկը Խորասանի շրջանակով), իսկ երրորդը՝ Երևանի նահանգով։ Այլ աղբիւրներից ստացած տեղեկութիւններին նայելով, առաջին երկու խմբերից երկուսը կ՚անցնի Խորասանի վրայով, իսկ միւս մասը՝ Օլթիի շրջանից։

Տեղեկութիւններին նայելով, Կաղզուանից անցնող խմբերը կազմակերպւում են Ալեքսանդրապօլում, Կարսում և Կարսի շրջանում ու դրանց անդամները՝ խմբի անցնելու ժամանակ պէտք է հաւաքուեն սահմանագլխում, ինչպէս պատահեց անցեալ աշնանը։ Խմբերը ստանում են զէնքեր ճանապարհին, բայց յայտնի չէ որտեղ։ Մասդիը են սահմանը անցնելու 2-4 կէսով, բայց միաժամանակ։

Յայտնելով այդ մասին, առաջարկում եմ Ձերդ բարեծնունդութեան ձեռք առնել ամենաեռանդուն միջոցներ՝ թոյլ չը տալու հայկական զինուորական խմբերի կազմելը Ձեզ յանձնուած շրջանում և նրանց շարժելը դէպի սահմանագլուխ։

Բայի դրանից, հայերը մտադրութիւն ունեն մայիսի բուկղեներին Կարս քաղաքում խառնակութիւն առաջ բերել, ուստի և իմ կողմից առաջարկուած է Կարսի ոստիկանապետին ձեռք առնել ամենախիստ միջոցներ և հսկողութիւն ունենալ հայերի վրայ։ Վերոյիշեալ բոլոր կէտերի վերաբերմամբ եղած ուշադրութեան արժանի կարգադրութիւնները պէտք է անմիջապէս զեկուցանել ինձ։

Զինուորական նահանգապետ
ՍԱՄՍՈՆՈՎ

Ն. Գ. Մ.
ԵՐԵՒԱՆԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ

ԳԱՂՑՆԻ

1904, ապրիլի 10
№ 305

Գաւառապետներին

Գաւառներից մէկի մէջ բռնուած է մի հայ, որը իր ազգակից երիտասարդների շրջանում մարդիկ է հաւաքում՝ մի ինչ որ ազգային մ ի լ ի ց ի ա յ ի համար, վերցնելով նրանցից բերանացի համաձայնութիւն։

Այդ հանգամանքին զինուորական նշանակութիւն տալով՝ առաջարկում եմ Ձերդ բարեծնունդութեան հետևել՝ որպէսզի ձեզ յանձնուած գաւառում չը թոյլատրուի այդ օրինակ յանցաւոր պրօպագանդ, և եթէ այդպիսի դէպքեր տեղի ունենան, հարկաւոր է անմիջապէս օրինական ընթացք տալ գործին։

Նահանգապետ՝ ՏԻԶԵՆՀԱՈՒԶԷՆ

Ն. Գ. Մ.
ԴԻՒԱՆԱՏՈՒՆ
ԵՐԵՒԱՆԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ

ԳԱՂՑՆԻ

ԳԱՂՑՆԻ ԲԱԺԻՆ

(Ընդարձակաբար)

1904, փետրուար 21
№ 283

Երևանի նահանգի գաւառներից մէկում ներկայ փետրուարի 8-ին ութիթ եղաւ բռնելու մի անծանօթ անձ, որը իրան յայտարարեց թիւրքահպատակ և որը Հայերի շրջանում փողեր է հանգանակում, ըստ երևոյթին, յանցաւոր նպատակով։ Առաջարկում եմ Ձերդ բարեծնունդութեան՝ անմիջապէս կարգադրել որպէսզի ձեզ ենթակայ պաշտօնեաները՝ խստագոյն հսկողութիւն նշանակեն այդ տեսակ անձանց վրայ, որոնք զբաղուում են ժողովրդի մէջ փողեր հանգանակելով և եթէ դէպքեր լինեն՝ անմիջապէս դործին օրինական ընթացք տան։ Այդ օրինակ իւրաքանչիւր դէպքի մասին դուք անմիջապէս զեկուցագրելու էք ինձ։

(Ստորագրութիւն)

Ջ. Ժ. Կ.
ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ

ԿԱՏԱՐԵԼԱՊԷՍ ԳԱՂՑՆԻ

(Ընդարձակաբար)

ԳԱՂՑՆԻ ԲԱԺԻՆ

1904, ապրիլի 28

ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԻ ՇՐՋԱՆԱՊԵՏՆԵՐԻՆ

Երևանի նահանգական ժանդարմական վարչութեան գրասենեակը, ներկայ ապրիլի 10-ի հաղորդագրութեամբ, № 702, տեղեկացնում է զինուորական նահանգապետին, որ ըստ կարգադրութեան հայկական ռազմա-յեղափոխական կազմակերպութեան գործակալն՝ զանազան քաղաքներից թիֆլիս հաւաքուել են մինչև 150 հոգի, որոնք պատկանում են վերոյիշեալ կազմակերպութեան, և մի քանի օր այնտեղ մնալուց յետոյ՝ դնացել են դէպի Նախիջևանի կողմերը։ Նրա պատմածներին նայելով, Երևանի նահանգում և Կարսի շրջանի մէջ մինչև 35 հազար հոգի ցանկութիւն են յայտնել մտնել խմբերի մէջ, որոնց մի մասը պէտք է անցնի թիւրքիա՝ անմիջապէս կամ Պարսկաստանի վրայով, իսկ միւս մասը պատրաստ, որպէս թէ, անկարգութիւններ առաջ բերել Ռուսաստանի սահմաններում ներկայ թուականի մայիսի 1-ին։

Յայտնելով այդ մասին, առաջարկում եմ ինձ յանձնուած նահանգի բոլոր շրջանների կառավարիչներին՝ ձեռք առնել ամենաեռանդուն միջոցներ՝ գտնելու կազմակերպող հայկական խմբերը և թոյլ չը տալու որևէ անկարգութիւն իրանց յանձնուած շրջանակում։

Հետևանքի մասին հաղորդագրել ինձ։

Զինուորական նահանգապետ՝ ՍԱՄՍՈՆՈՎ

Ն. Գ. Մ.
ԵՐԵՒԱՆԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ

ԳԱՂՑՆԻ

16 փետրուարի 1904
№ 24

Ալեքսանդրապօլի
Գաւառապետին

Ինձ հասած տեղեկութեան նայելով՝ հայկական տերրօրական կուսակցութեան անդամները փորձում են տարածել ազգաբնակութեան մէջ այն միտքը, որ նա (ազգաբնակութիւնը) իր գործի համար զինուորական վարչութիւնների չը դիմէ, այլ դիմի կուսակցութեան անդամներին, որը կարող է վճռել գործերը և ուր հարկաւոր է՝ պատժել մեղաւորներին։

Յայտնում եմ այդ մասին Ձերդ բարեծնունդութեան, որպէսզի լուրջ ուշադրութիւն դարձնէք այդ օրինակ պրօպագանդի վրայ և տեղեկութիւն ստացած դէպքում՝ ձեռք առնէք բոլոր միջոցները՝ յանցաւորներին կալանաւորելու համար, հաղորդելով ինձ անմիջապէս հետևանքների մասին։

Նահանգապետ՝ կոմս ՏԻԶԵՆՀԱՈՒԶԷՆ

Ի՞նչ արժէք ունեն այդ „կարևոր“ պետական թղթերը, կնքուած, համարներով, բլանկների վրայ և հազար ու մի ձևականութեան ենթակայ։ Այդ արժէքը չափւում է նրանց բովանդակութեամբ. իսկ բովանդակութեան կողմից՝

Առաջինը՝ սուտ է,
Երկրորդը՝ թեթևամիտ,
Երրորդը՝ ափեղցփեղ,
Չորրորդը՝ չարամիտ,
Հինգերորդը՝ երևակայական,
Վեցերորդը՝ ցնորական,
Եօթներորդը՝ նենգաւոր։

Արդ, գումարեցէք այդ բոլորը՝ սուտ+թեթեւամիտ+ափեղցփեղ+չարամիտ+երևակայական+ցնորական+նենգաւոր, և դուք կըստանաք մի այլանդակ շաղախ, որի անունն է... ռուսաց կառավարութիւն։

Է. ԱԿՆՈՒՆԻ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Ցարի պետութիւնը վաղուց չըտեսնուած ճգնաժամ է ապրում։ Պատերազմը մի ճշմարիտ պատուհաս եղաւ նրա համար.—փոքրիկ, արհամարհած Յապոնիան մի շարք փառաւոր յաղթութիւններով, կարելի է ասել, մի անգամ ընդմիշտ վտանգեց Ռուսաստանի զինուորական հմաքը։ Պարտութիւններ՝ մինը միւսից ծանր ու աղետալի՝ որոնց մէջ երևան է գալիս իր գաղտնի մերկութեամբ բռնապետական ռէժիմը՝ իր շահախնդիր, կաշառակեր ներկայացուցիչներով, իր անընդունակ հրամանատարներով, որոնք յարուցանում են քաղաքակիրթ աշխարհում ծաղր ու արգահատանք։

Ռուսաց զէնքի անաջողութիւնը ուժգնապէս անդրադառնում է „ներսի“ տրամադրութեան վրայ։ Ստրուկ ազգերը քաջալերւում են։ Ամբողջ կայսրութիւնը, սկսած „բոցավառ Կօշխիդայից մինչև Ֆինլանդիայի ապառաժները“՝ ծփում է յարաճուն ալեկոծութեան մէջ։ Տէռօրը նշանաբան է դառնում ամեն տեղ։ Նա այժմ երևան է գալիս նոյնիսկ Ֆիններին սառցապատ հայրենիքում, որը ահա չորս տարի շարունակ մի զարմանալի համբերողութեամբ տանում էր Բօբրիկովի, ցարի այդ հլու սպասաւորի, կամայականութիւնները։

Ահա Բօբրիկով ընկաւ արիւնաթաթախ՝ Ֆինլանդական սենատի սանդուղքների վրայ,—այն հիմնարկութեան շէմքում, որ նա չորս տարուց իվեր դարձրել էր կենտրոն իր արքայահրահանգ ոճրագործութիւնների... Մի Ֆինն հերոս էր—Շումա ն—որ կատարեց ժողովրդական վրէժխնդրութեան այդ գերագոյն քայլը, պսակելով իր հերոսութիւնը՝ ինքնասպանութեամբ...

Լեհաստանը ևս անհանգիստ է։ Վերջերս շարունակ դաւադրութիւնների ու խռովութիւնների լուրեր են գալիս Վարշաւայից։ Սրանից քիչ առաջ մի քանի լեհեր օր ցերեկով ատրճանակի հարուածներով կոտորեցին մի խումբ պոլիցիականների, որոնց թւում և ոստիկանապետի օգնականին։ Իսկ այսօր ահա հեռագիրը լուր է բերում նոյն Վարշաւայից մի մեծ, արիւնահեղ ընդհարումի մասին։ Բանւորները խուռն բազմութեամբ զրոհ են տուել ոստիկանութեան դէմ և սպանել են մի ոստիկան։ Վայ են հասել ամեն կողմից կօզակներն ու ոստիկանական գործակալները, բայց բազմութիւնը յետ է մղել նրանց՝ գոռալով. „մահ թագաւորին“... Ջօրքը եկել է գիշեր ժամանակ և կրակ է արել բանւորների վրայ։ Հետևանքը—8 դիակ բանւորներից, 8-ը՝ զինւորներից և 30 զինւոր վիրաւորուած։

Նշանակալից, յուսատու լրողութիւններ են... Ընդհարումներ, պարբերական խռովութիւններ ծագում են Ռուսաստանի ամբողջ տարածութեան վրայ, մի օր Օդեսսա, միւս օր Ռիգա, միւս օր այս կամ այն երկրագործական շրջանում, գիւղացիների մէջ։ Բռնապետութիւնը կորցրել է գլուխը։ Հասե՞լ է արդեօք „Տիեզերական Բաստիլ“-ի խորտակման ժամը...

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

* * *

Հռչակաւոր քիմիկոս և ֆրանսիական արտաքին գործերի նախկին մինիստր Բերտօլէ՝ ի պատասխան մի երկու պարոնների դրած հարցումներին՝ Սասունի անցքերի և հայկական հարցի առիթով հետևեալն է ասել.

„... Տաս տարուց իվեր ընդհանուր ցասումն են յարուցանում այն գազանութիւնները, որ անդադար գործ են դնում անմեղ մարդկանց՝ ծերերի, կանանց ու երեխաների վրայ քրդերը՝ համիդիէ գնդերի և թիւրք զօրքերի ու վարիչների աջակցութեամբ։ Բերլինի դաշնագրով խոստացած ռէֆօրմները մշտապէս և անամօթաբար յետ են մղւել։

„Ֆրանսիական կառավարութիւնը 1895-ի նոյեմբերին, իմ առաջարկութեամբ, ուղարկեց իր նաւատորմը Արշիպելագոսի ջրերը և դա արգելք եղաւ տարածելու հայոց կոտորածները Սիրիայի ազգաբնակութիւնների մէջ, որոնց սպասում էր նոյն աղետի դարձը, որ պայթել էր նրանց գլխին 30 տարի առաջ։

„Այն հրահանգները, որ ես ուղղել էի կ. Պոլսի մեր դեսպան պ. Կամբօնին, պաշտպանել են այդ վերջինի կողմից մի այնպիսի ուժով ու եռանդով, որ արժանի են ամեն ներքողների...

„Սակայն Ֆրանսիան այնքան հզօր չէ, որ գործէ մեն-մենակ՝ միջազգային այն հակառակութիւնների, փառասիրութիւնների ու շահերի մէջ, որոնք մինչև օրս անդամալուծել են մեր բոլոր ճիգերը և ապատ ընթացք են տուել Հայաստանի մէջ կատարուող ոճիրներին...

„Ես ճանաչում եմ մէկին, որին սրանից 8 տարի առաջ մի հեղինակաւոր անձնաւորութիւն (մի մեծ պետութեան դեսպան) առաջարկել է մտերմական ձևով—ինչպէս նաև ուրիշ կառավարութիւններին—բաժանել օսմանեան կայսրութիւնը“...

Պատասխանելով իր խօսակցի այն հարցին, թէ ի՞նչ ձևի լուծում կարող է ստանալ հայկական խնդիրը՝ ինքնավարութեան թէ որևէ խնամակալութեան ձևով—Բերտօլէ ասաց.

„Բացարձակ անկախութիւնը այդ դժբախտ ազգաբնակութեան համար՝ կը հանդիպէր—ներկայումս—գրեթէ անյաղթելի դժուարութիւնների, հէնց այն պատճառով, որ կայ ցեղերի այլազանութիւն և մանաւանդ անվերջանելի հակառակութիւն կրօնների, որոնք պայքարի մէջ են։

„... Ես կողմնակից եմ եւրոպական պետութիւնների մի հաւաքական գործողութեան, որը վերջ դնէր այդ գազանութիւններին, և ես համոզուած եմ, որ մի քանի պետութիւնների կորովի պահանջի առջև, սուլթանը—չնայած կայզերի ծածուկ հովանաւորութեան, որը դարձրել է նրան վերջին Բալկանեան անցքերի միջոցին այնքան ամբարտաւան—հարկադրուած կը լինի զէնք ու վերջ դնել իր զինւորների վայրագութիւններին“։

* * *

Անգլիական *Daily News* լրագրի Պարսկաստանի թղթակիցը հետևեալ կերպով է նկարագրում Սասունի վերթակիցը

ջին անցքերը, „Կրակը և սուրը Հայաստանում“ վերնագրով թղթակցութեան մէջ (յունիս 13).

„Թիւրքաց իշխանութիւնները, տեղեկացած լինելով, մի քանի ժամանակ առաջ, որ Անդրանիկը Սասունում է եւ որ նա պատրաստութիւններ է տեսնում պաշտպանելու թիւրքերի յարձակման դէպքում, սկսեցին վաղաժամ, մարտ ամսում, կենտրոնացնել զօրքեր ու քրդեր Սասունի շուրջը։

„Հայերի կողմից ուղղակի զրգռումները բացակայելով՝ թիւրքերը դրդեցին լատկան եւ պատրկան քիւրդ ցեղերին՝ յարձակում գործել Կէլիէկընման դիւղի վրայ. դրա նպատակն էր դիմադրութիւն առաջ բերել եւ յայտարարել հայերին որպէս ապստամբներ, որպէս զի ընդունելի պատրուակ լինէր՝ իրագործելու ջարդի ծրագիրը, կատարեալ բնաջնջումը Սասունի, որ համարւում է հայկական շարժման պատուարը։

„Թիւրքաց դիտաւորութիւնները յայտնի դառնալով՝ 30-ից աւելի հայ գիւղերի ժողովուրդը ապաստանեց Կէլիէկուզան, ուր Անդրանիկը ամրացած էր իր մի քանի հարիւր հետեւորդներով։ Չնայած կատաղի յարձակումներին եւ ռմբակոծութեան՝ հայոց դիմադրութիւնը չարունակուեց մինչեւ 3 մայիս, երբ որոշուեց քաշուել դէպի Տալուորիկ։ Դեռ յայտնի չէ վերջինիս վիճակը. երկիւղ կայ, որ նա բոլորովին կործանուի“։

Նոյն լրագրի կ. Պոլսի թղթակիցը իր յունիս 8-ի թղթակցութեան մէջ՝ խօսելով սասունցիների շարժման ու թիւրքերի բռնութիւնների մասին, վերջացնում է հետեւեալ խորհրդածութիւններով.

„Ներկայ բռնկման ամենածանրակշիռ հանգամանքն այն է՝ որ սա մի մասն է կազմում այն նախագծի, որի նպատակն է՝ դնել հայերին իրենց մանէգական հարեւանների մշտական սարսափի տակ։ Սա մի անարգանք է եւրոպական դիւանագիտութեան համար, որ հանդուրժում են հայ ազգաբնակութեան մշանջենական չարչարանքը։ Կարելի է ընդունել, որ արեւմտեան պետութիւնների համար դժուար է միջամտել առանց Ռուսաստանի աշխատակցութեան, բայց եթէ նրանք տրամադիր լինէին միաբան ազդու ցոյցեր անել, Ռուսաստանը, հաւանօրէն, կը միանար նրանց։ Մեր երկիրը (Անգլիան) թէեւ ուրիշներից աւելի տրամադրութիւն է ցոյց տալիս՝ ուշադրութիւն հրաւիրելու Հայաստանում տեղի ունեցող հարստահարութիւնների ու յոռի վարչութեան վրայ, բայց ամենուին չէ խօսել վճռականութեամբ արդարութիւնը ապահովելու համար“։

* * *

Ռուսաստանի ազատամիտ կուսակցութեան օրգան՝ „Ռուսսկիա Վէդօմոստի“ լրագիրը հետեւեալն է գրում իր մի խմբագրականի մէջ.

„Տաճկաստանում նորից սուր կերպարանք է առնում հայկական խնդիրը... Յունուարի վերջերից Սասունի շրջանում թիւրքերն ու քրդերը փոքր ա՝ փոքր սկսեցին թալանն ու բռնութիւնները. մարտի վերջերից՝ գիւղերի աւերումը դարձաւ սիստեմատիկ։ Ազգաբնակութիւնը քաշուեց լեռները՝ հայ ապստամբական խմբերի հովանաւորութեան տակ։ Ներկայումս քսանհազարաւոր տաճկական բանակը եւ տասնեակ հազար քրդեր պաշարում են լեռները։ Թիւրքերը շտապում են, աշխատելով շուտ վերջացնել գործը։ Նրանց նպատակը պարզ է,—ուզում են Սասունը միանգամ ընդմիշտ դարձնել անմնաս... Հասկանալի է, թէ ինչու հայերը յուսահատօրէն դիմադրում են թիւրքաց ծրագիրներին։

„Հայերի մղած կռիւը թիւրք կառավարութեան դէմ նոյն նպատակն ունի, ինչ եւ մակեդոնացիներինը։ Նրանք ուզում են զատել գերակշռող հայ բնակչութիւն ունեցող վեց վիլայէթները եւ կազմել մի չրջան, որ իրեն պլուխ պիտի ունենայ քրիստոնեայ կառավարիչ, ուրիշ խօսքով՝ նրանց ուզածն է ինքնավար մի դրութիւն, նման Կրէտէին։ Միանգամայն հետեւողական է թւում, որ դիւանագէտները ընդունեն այդ ինքնավար ձեւի հնարաւորութիւնը նաեւ Հայաստան վերաբերմամբ։ Ինքնավարութիւնը միակ ճանապարհն է, որի միջոցով կարելի է հասնել երկրի ապահով խաղաղացման։ Այդ հանգամանքին լաւ գիտակից են իրենք դիւանագէտները, թէեւ մինչեւ օրս վաղաժամ են համարել նրա իրագործումը Հայաստանի եւ Մակեդոնիայի մէջ։

„Ինքնավարութեան տեղ՝ Հայաստանը կարող էր ստանալ ռէֆորմներ, որոնք ապահովէին նրա ազգաբնակութեան համար գոյութեան մարդավայել պայմաններ։ Սակայն Մակեդոնիայի հետ արուած փորձը ցոյց տուեց, որ մինչեւ իսկ այնպիսի երաշխաւորութիւններով ապահովուած Միւրշտէգի ծրագիրն էլ կատարելապէս չէ համապատասխանում իր նպատակին, չնորհիւ խուլ, լայց յամառ դիմադրութեան, որ անում է թիւրք վարչութիւնը։ Քանի որ կարելի է սպասել, որ ոչ վարչութեան դիմադրութիւնը, ոչ էլ Եըլդըզի դաւերը չեն դադարեցուց, ուստի հաւանական է դառնում, որ Մակեդոնիան կը ստանայ իր ընդհանուր քրիստոնեայ նահանգապետը։ Այդ ուրեմն խելացի ու գործնական կը լինէր՝ Հայաստանի վերաբերմամբ չ'անել փորձեր նուազ արժանաւոր ռէֆորմներով“։

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎԱՆԵՑԻ

Դարձեալ մի ընկեր կորցրինք։

Երրորդ ընդհանուր ժողովը հալիւ վերջացած, որին մասնակցում էր իբրև Վանի Կենտրոնական կոմիտէի պատգամաւոր,—նա՝ լի ոգեւորութիւններով և ոգեւորութեամբ, շտապում էր Վասպուրական, հաղորդելու անհամբերութեամբ իրեն սպասող ընկերներին նոր ծրագիրներ, նոր յոյսեր։ Բայց տեղ չհասած, կուի բռնեց Թշնամու հետ և նահատակուեց (տես երես 80)։

Բնիկ վանեցի էր Յովհաննէսը, ուսած այդ քաղաքի մէջ, յայտնի՝ ընկերների շրջանում, իբրև վերին աստիճանի աշխատաւոր, համեստ ու ճշդապահ։ Յարիներ առաջ յարեց յեղափոխութեան և դեռ 1897 թուին մասնակցեց Խանասորի արշաւանքին՝ մարտիկ զինուորների շարքում։ Այնուհետև ամբողջապէս նուիրուած Վանի գործերին, նա աշխատակցեց Վազգէնին, մասնակցեց կենտրոնական կոմիտէի աշխատանքներին, աջակցեց Վարդգէսին, յաճախակի պտոյտներ արեց գաւառներում կազմակերպական գործերով, և շատ անգամ զէնքի փոխադրութեամբ զբաղուեց։ Վերջին տեսակի ձեռնարկների միջոցին, նա քրդերի հետ մի անգամ էլ ընդհարում էր ունեցել և իրաւունքով կարող էր յարգելի տեղ բռնել կռիւների մէջ մարզուած ընկերների շարքերում։

Յարգանք ա՛ր յեղափոխականին։

(Կենսագրութիւնը ապագայում)

ԱՄՍԱԼՈՒՐԵՐ

* * *

Լոնդոնի լրագիրների մէջ կարդում ենք.

„Արևելեան Հարցի մասին լինելիք Միջազգային խորհրդաժողովի կարգադիր կոմիտէն երէկ առաւօտեան յունիսի 14-ին, ժողով գումարեց՝ նախագահութեամբ պարլամենտի անդամ՝ պ. Ստէֆէնսընի։

„Այդ ժողովին կարդացուեց իտալացի իշխան Օդեսկալկիի մի նամակը, որի մէջ ասուած էր, թէ բովանդակ Իտալիայի մէջ օրէցօր աւելի և աւելի ուժեղանում է տրամադրութիւնը՝ ի նպաստ կ. Պոլսում կատարուելիք իրական փոփոխութիւնների։ Իշխանը սրտագին ողջունում է առաջադիմութիւնը այն ընդարձակ միջազգային շարժման, ծրագրուած համաձայն մարդասիրական պահանջների, որոնք սահմանում են հաւասար իրաւունքներ բոլորի համար։

„Ֆրանսիացի դը Միրպուա առաջադրեց թարգմանութիւնը երեք որոշումների, որոնք պիտի ներկայացուեն առաջիկայ միտինգին։ Ահա որոշումները՝ 1) Յանձնարարել Պարիզի, Հռոմի և Լոնդոնի դիւանատներին՝ ընդունել այնպիսի միջոցներ, որոնք առաջ մղէին արդարութեան ու մարդկայնութեան դատը թիւրքաց կայսրութեան բոլոր նահանգների մէջ։ — 2) Հրաւիրել բոլոր ազատ ժողովուրդներին գործակցել՝ օգնելու համար թիւրքական վատ վարչութեան զոհերին։ — 3) Յայտարարել, որ ժամանակը հասել է, երբ պետութիւնները պիտի թախանձեն առաջ բերել թիւրք կայսրութեան վարչութեան մէջ այնպիսի փոփոխութիւններ, որոնք ապահովէին օրէնքի և կարգի պահպանումը“։

*

Էջմիածնի գաւառապետ Շմերլինգի վրայ արուած տեղական փորձի առիթով (տես „Դրօշակ“, № 3), մեզ գրում են հետևեալը.

„Գաւառապետ Շմերլինգ՝ հայոց եկեղեցական կալուածները յափշտակող կոմիսիայի ամենաեռանդուն անդամն էր։ Հայատեցութեան և ստորութեան մէջ իր հարևան գաւառապետ Բօգուսլաւսկուն հետևելով, նոյնիսկ նրանից էլ առաջ է անցել։ Թիւրքահայ գաղթականներին հարիւրներով բանտարկում, գանակոծում էր և հասարակութեան ներկայութեամբ ծերունիների մազերն ու ֆիրուքը փետում անամօթաբար։ Մինչև կալուածական խնդրի առաջ գալը, Շմերլինգ համարւում էր սովորական գաւառապետներից մէկը։ Իսկ երբ հարց եղաւ Շմերլինգին ուղարկել Իգդիր և Իգդիրի գաւառապետ Բօգուսլաւսկուն, իբրև կատարեալ դահճի, փոխադրել Էջմիածին, Շմերլինգ իր „բարեխղճութիւնը“ փոխեց ծայրայեղ անբարեխղճութեան, որպէս զի անգթութեան մէջ գերազանցի իր արժանաւոր կօլլէգին և կառավարութեան աչքում պահպանի „նաչալնիկական“ վարկը։ Նրա բացարձակ գաղանութիւնների և լրբութիւնների պատասխան պիտի համարել կատարուած տեղական գործողութիւնը, որ երկրորդ փորձն է նրա վրայ“։

*

Ռուսաց „Սոցիալիստ-Յեղափոխականների“ կուսակցութիւնը մօտերս հրատարակեց մի գրքոյկ, նուիրած կովկասեան հայերի վերջին շարժումներին։ Գրքոյկը կոչւում է „Ինչո՞ւ են հայերը ապստամբւում“ և պատկանում է Ֆ. Վ. Օլխովսկու շնորհալի գրչին։

*

Վաղարշապատից գրում են մեզ հետևեալը.

„Հեռագիրը արդէն լուր բերեց, որ Էջմիածնի հին պրօկուրօր Կանչելիի տեղ՝ նշանակել են նորը, նախկին փաստաբան Գրինկէլը, որը մինչև այժմ լոկ պաշտօնական էր։ Վերջինի քաղաքականութիւնը, ինչպէս երևում է, հոգևորականութեան գլխի տակ „փափուկ բարձեր“ դնելն է, կամ աւելի ճիշդ կը լինի ասել՝ առայժմ նա ոչ մի կերպով չի արտայայտում իր „գոյութիւնը“։ Տեսնենք, ինչ ցոյց կը տան գալիք օրերը։ Տարաբայ սկզբին՝ կառավարութեան նշանակած հայոց եկեղեցական կալուածների կառավարիչը, վաղարշապատցի խանութպաններին առաջարկում էր—կամ նոր պայման կապել իր՝ կառավարութեան ներկայացուցչի հետ, կամ թէ երեք օրւայ ընթացքում դատարկել խանութները։ Ի պատիւ վաղարշապատցի խանութպանների, պէտք է ասել, որ նրանք ինքնաբերաբար, առանց միջամտութեան Ինքնապաշտպանութեան Կոմիտէի, կէսից աւելին դատարկել էին խանութները, բացարձակապէս հրաժարւելով պայմանաւորուել կառավարութեան մարդու հետ։ Խնդիրը այդպէս թերի էլ մնացել է՝ մի մասը դատարկած՝ միւսներն էլ հին հաշուով շարունակում են խանութները նստել առանց ոչէ պայմանի։ Բացառութիւններ կան“։

*

Ստացանք հետևեալ հեռագիրը Կարսից.

„Կառավարութիւնը անսովոր կերպով սաստկացրել է հսկողութիւնը սահմանագլուխներում։ Բոլոր գիւղերը լցրել է ստրաժնիկներով։ Հաղորդակցութիւնը վերին աստիճանի դժուարացել է։ Խուզարկութիւնները վերջ չունին“։

*

Երևանից հաղորդում են հետևեալ փաստը.

„Սրանից մի ամիս առաջ, Երևանում տեղի ունեցաւ ռուսաց նորակառոյց եկեղեցու օծումը, որի հանդէսին ներկայ գտնուելու էր հրաւիրուած նաև Երևանի հայոց թեմական յաջորդը—կաթողիկոսական փոխանորդ վարդապետը, որը և պատրաստւում էր անձամբ ներկայ լինելու։ Անմիջապէս գաղտնի կոմիտէի կողմից մարդիկ են ուղարկւում մօտը՝ յայտնելու, որ չ՝երթայ, թէպէտ այդ եկեղեցու օծման հանդէսին հայոց առաջնորդի պաշտօնական ներկայութեան բոլոր անյարմարութիւնները։ Փոխանորդ վարդապետը վստահացել էր չ՝ընդունել կոմիտէի բարեկամական խորհուրդը։ Այդ պատճառով վերջինը, երկրորդ անգամ, իր ներկայացուցիչներին ուղարկում է, այս անգամ արդէն Դաշնակցութեան կնիքով կնքած պաշտօնական գրութեամբ, որի մէջ ասած էր, թէ չհասակերպելու դէպքում, պատասխանատու է կոմիտէն առաջ։ Դաշնակցութեան կնիքը — պատիւ նրան — իր ազդեցութիւնը ունեցաւ։ Հետևեալ օրը վաղ առաւօտեան, վարդապետը փոխանակ ռուսաց եկեղեցի գնալու, ուղևորուել էր Էջմիածին“...

*

Հաւասի գործակալութիւնը յունիսի 21-ից կ. Պոլսից հեռագրում է հետևեալ լուրը.

„Հաւաստիացնում են, որ Անգլիան սպառնացել է թիւրքաց կառավարութեանը՝ մի նաւային ցոյցով, եթէ բաւարար միջոցներ ձեռք չ՝առնին՝ արգելելու հակահայկական բռնութիւնների կրկնութիւնը“։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱԶԴԵՐ

ՊԱՏՃԷՆ

Պալքանեան շրջանակ. ժողովի 21-րդ նիստի որոշման

Պատգամաւորական ժողովը՝

Նկատելով որ Պուրկազի մէջ գոյացած 28 մնտուկի խնդրոյն մէջ, առանց ոեւէ մեղակցութեան, քանի մը ընկերներ յանիրաւի ամբաստանուած են, որոշեց իր անունով Դաշնակցութեան պաշտօնական օրգանին մէջ հրատարակել հետեւեալը.

„Յայտարարութիւն Հ. Յ. Դաշնակցութեան Պալքանեան շրջանի պատգամաւորական ժողովին.

„Պուրկազի մէջ կատարուած 28 մնտուկի գողութեան խնդիրը՝ Դաշնակցութեան կարեւոր մարմիններու միջոցաւ մանրազնին կերպով քննուած ըլլալով՝ պարզուած է թէ այդ գործին մէջ մեղաւոր հանդիսացած են Կարապետ Մարտիրոսեան (զէնքերը ծախող), Մաքսուտ Պալիկեան (աշակցող ժամագործը) եւ Ա. Ա. (Մարտիրոսեանին դիւրութիւն տուող Ռումանիա փախչելու համար)։

„Այդ մեղաւորներուն պատիժը որոշելն ու գործադրելը յանձնուած էր Պօլսոյ պատասխանատու մարմնին, որ հետեւեալ վճիռը տուաւ. — ա) Մահուան պատժի ենթարկել Կարապետ Մարտիրոսեանը, ինչ որ արդէն գործադրուեցաւ. բ) Տուգանքի ենթարկել Ա. Ա., որմէ գանձուած է 1,000 ֆրանք. գ) Իսկ Մաքսուտ Պալիկեան Եգիպտոսի մէջ բնական մահուամբ մեռած ըլլալով՝ անոր վերաբերեալ որոշումը չի գործադրուած։

„Զէնքերու եւ փամփուշտներու մէկ մասը երեք տարի առաջ ետ առնուած են։

„Կը յայտարարենք որ մեր ընկերներէն եւ համակրողներէն Վարդո եւ ուրիշներ ոեւէ մասնակցութիւն չեն ունեցած այդ աղտոտ գործին մէջ“։

Հ. Յ. Դ. Պալքանեան շրջանի
Պատգամաւորական ժողով

ՆԻՒՐԱՏԻՈՒԹԻՒՆ

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕՆ *ստացած է՝*

Ռուսաստան. — Տաշկենտից՝ Վարդան Խանի միջոցով 50 ռուբլի, նիւրատուներն են՝ Քէլեսեան 25 ռուբլի, Դիզակ 10, Առըսեան 10, Թադէոս 5 ռուբլի։ Կովկ. Հ. ք-ից Դարմշտ.-ի մի ուսանողի միջոցով 50 ֆրանք։ „Դրամ“ կ-ից 5,000 ֆրանք։

Գերմանիա. — Դարմշտատի ուսանողներից՝ ի նպաստ երկրի կուողների 24 ֆր., Միւնխենից Տ. Ե. 25 ֆրանք։

Ցուսաստան. — Պիրէից՝ Վտարանդի 7 ֆրանք։

Աւստրիա. — Վիէննայից՝ Տիգ. Ալ. 10 ֆր. 45 սանտիմ։

Ռումանիա. — Բրայիլայից՝ Խաչ. Ցակ.-ի միջոցով 186 ֆր.՝ հանգանակուած ի նպաստ Անդրանիկի։ Նոյն տեղից, Մ. Մ.-ի միջոցով, տեղւոյն Կարմիր Խաչի 9 անդամներէ 150 ֆր.՝ ի նպաստ Անդրանիկի։ Բուքրէշից Ե. Հ.-ի միջոցով 400 ֆր.՝ հանգանակուած ի նպաստ Անդրանիկի։

Շվէյցարիա. — Հայնֆելտեր. ք-ից Ծերունեանի միջոցով 16 ֆր. 35 սանտիմ. նիւրատուներն են՝ Ս. Քէհիայեան 2. 5 ֆր., Մ. Ներիցեան 2. 5, Մ. Աբէլեան 2. 5, Մկո 2. 5, Փրայտուրկ 3. 75, Վարդգէս 2. 5 ֆր.։ Լօզանից օր. Ս.-ի միջոցով, հայ ուսանողների տուած երեկոյթից՝ 200 ֆրանք, Ժընէվից տիկ. Ա.-ից 37 ֆր., Ը. Մ. 3 ֆրանք։

Ընդհանուր գումար 6918 ֆրանք, 80 սանտիմ, 50 ռուբլի։

ԲԱԼԿԱՆԵԱՆ *կեդր. կոմիտէն՝*

Փիլիպէ. — Հեթում-Գագիկ խ. 20 լէվ, Արեւելեան խ. 27, Վրէժ խ. 80, Տարօն խ. 25, Սրեւելեան խ. 12. 50, Հեթում-Գագիկ խ. 33, Տ. Ք. 10, հանգանակութենէ մը 510 լէվ եւ 495 ֆր., Արեւելեան խ. 20, Ոսկեհանից 25, Հեթում-Գագիկ խ. 27, Վազգէն խ. 10. 80, Ղարիպ 5, Շաբէ կանանց խ. 168. 10, օրիորդաց Կարմիր Խաչ խ. 154, Տարօն խ. 28. 50, Նշերից 60 ֆր., Վասպուրական խ. 60. 70, երգեցիկ թատերասիրաց խումբի տուած ներկայացման հասոյթ 310, լսարանի հասոյթ 200 լէվ։ Ընդամէնը 1726. 60 լէվ, 555 ֆրանք։

Սոֆիա. — Անդրանիկ խ. 22 լէվ, Թաթուլ Զարմանեան խ. 40, Սերոբ-Աղբիւր խ. 60, խնջոյքի մը մէջ հանգանակուած 100, Անդրանիկ խ. 40, Սերոբ-Աղբիւր խ. 30, Մ. Մանուէլեան 20, Սեպուհ խ. 100, Փէղայի խ. 39 լէվ։ Ընդամէնը 391 լէվ, 60 ֆր.։

Պուրկազ. — Մանուսաճիւղէն 100 լէվ, Օժանդակ խ. 57, Մասնաճիւղ. 200, Մանուսաճիւղ. 200, Օժանդակ խ. 30 լէվ։ Ընդամէնը 587 լէվ։

Ռուսճուք. — Սօմօվիտ 150 լէվ, Գործիչի յանձնուած 124 ֆր.։

Շումէն. — Դաշնակցական ընկերներէ 68 լէվ։

Սիլիստրէ. — Դաշնակցական ընկերներէ 175 լէվ։

ՌՈՒՄԱՆԻԱ՝

Բրայիլայի ենթակոմիտէն ստացեր է՝ Թորգով 5 ֆրանք, Արբիկ 3, Ջան 5, Նտում՝ 4, Վազգէն 5, Խաւրրծիլ 5, Շընտոլ 10, Խնձոր 10, Նուռ 6, Սալնոյ ձոր 5, Թափառական հայ 5, Հայաստան 10, Վարդերես 10, Առվրտայ 3, Կլեկուհի 1, Զինասէր 3, Մ. Գործիչ 20, Մ. Ազգասէր 40, Մ. Սպասար 15, Ա. Ինքնահիշեան 10, Ն. Արեւստագէտ 5, Ն. Ե. Աշխատող 3, Ս. Աչօվայ 3 ֆրանք։

ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ *կեդր. կոմիտէն՝*

Nr 7 հանգանակութեան թերթով.

Տիկին Մ. Ժ. 700 ղրան, Մարիամ եւ Շուշանիկ 500, Ռոմ 500, Ախպէր 1,000, Մ. Պ. 350, տիկին Թազագիւլ 300, Ա. Բ. 400, Ա. Բ. 400 եւ 500 հատ փամփուշտ, Շահ 200, Ռոմմի 300, Աստուածատուր 200, Նիկոլ Մել. Բար. 250, Ռոմ 500, Նունիա 100, Ս. Աղբիւր 500, Բ. Ե. 400, Հայկ 200, Զարեհ 174, Իշխան Ա. 200, Ռոմ համակրող 400, Բամբակ 200, Աւետիս 300, Աֆթ. 400, Բաժակ 100, Ռոմ 100, Ռոմ 50, Տիկին 100, Ա. եւ Ս. 60, Մ. եւ Ա. 60, Գոնարիկ 100, Պէտրից 50, Ռոմ 50, Ա. եւ Գ. 100, Ե. Գ. 100, Մ. Ղ. 50, Ճանապարհորդ 250, Անցագրութիւն 150 Գաւազան 50, Ռոմ 50, Ուսուցիչնիդ 80, Թամար 50, Դամբրչի 100, Ռոմ 80, Ռոմ 50, Շաւիղ 50, Ազիզ 50, Ա. 50, Ե. Խաչատուր 50, Փայտակարանցի 50, Լուսափայլ 50, Մինտ. Թադէոս 70, Բաբայեան 50, Աղոր 50, Արարատ 50, Ա. Խ. Փ. 80, Սիրանոյշ 50, Զ. Ձ. 100, Ե. Ա. 50, Ծղբ. Վ. 100, Անդրէ 100, Ա. Պ. 7774, Բ. Պ. 2350 ղրան։

Nr 13 հանգանակութեան թերթով.

Գրասենեակ 100 ղրան, Ռոմ 50, Ռոմ 60, Ընկերութիւն 50, Ռոմ 50, Կամոն 150, Հուր 60, Խաղութիւն 50 ղրան, Ստէսար եւ Միամիտ 100, Տիկ. Զաւահեր 200, Խաչատուր 50, Ռոմ 60, Բալասան 50, Վարսենիկ 50, Սմբատ 50 ղրան, Փիան 50, Նազար 100, Ա. Ա.-ից 100, Մ. Տ. 8 50, Տիկ. Գոր. 100 ղրան։

Վրէժ քաղաքի խմբերից՝ Ախպէր խմբ. ներկայացումից 1072 ղրան 20 կօպէկ, պատահական նուէրներ 249, ամսավճարներ 262, Կայծակ խմբ. 32, Գարուն խմբ. 85, Մարօ, Երկաթ, վիճակախ. եւ անդամ. 287, Նոր հոսանք I. երեկոյթից 100, Քրդինք խմբ. բուքէթից 104 ղրան։

Նոր-Զուղայից՝ Համար 100-րդ ստացականով Ե. Կ. 1,000 ղրան, № 111-րդ ստացականով Ե. Կ. 800 ղրան։

Մարաղայ խմբից 367 ղրան 25 կ., Ռաշտ ք. խմբերից՝ Փունջ խմբ. 225, Փալախի մեջոցաւ 590, Փիրաբազարից 100, Ա. տոնախմբութիւնից 10, Կայծակ խմբ. ներկայացումից խնջոյքներից եւ ամսավճարներից 111 ղրան 40 կ., Մեղու խմբ. 137, Մ. Մ. Ե. 5, տիկ. Շ. Մ. Պ. 5, օր. Բ. Մ. 8. Ա. Մ. 10, Դ. Մ. Պ. 10, Ռոմ 5։ Ղազլինից՝ Աբցան. խմբ. 100, վիճակախաղից 500, Արծաթանք խմբ. ներկայացումից 100 ղրան, ամսավճարներ 100, Գոմ՝ 200 ղրան, Լ. Բարդն. մեջոցով 200 ղրան, Էնզելի Սէր խմբ. հանգանակութիւն Nr 15 թերթով 419, Թէհրանից Մ. Բ.-ի միջոցով 400, Պարքուշից Պ.-ի միջոցով 500 ղրան։

Nr 15 հանգանակութեան թերթով.

1903 թիւ 6 ղրան, Ս. Զ. 6, Ա. 10, Ա. 5, Բ. Դ. 5, Ի. Զ. 10, Մի ռոմ 20, Օտար 50, Ախ 20, Ցոյս հավատս 5, Աւ. 5, Խնագր 10, Պետ 10, Խօսք 5, Մի ռոմ 10, Ալէքսան Տէր Զաքարեան 10, Մի ռոմ 10, Մի ռոմ 10, — 10, Միխաքնլիս 10, Հայկ 3, Խաչի 20, Ռոմ 10, — 29, Մի խնջոյքում 60, Միզաթ 20, Մարդ 15, Մամզուրի 10, Անդրանիկ 20, Ք. եւ Ի. 5 ղրան։

Վրէժում հանգանակուած՝ Ախպէր խմբ. 293 ղրան, Գարուն խմբ. 238, Նոր հոսանք I. խմբ. 55, Նոր հոսանք II. խմբ. 36, Կայծակ խմբ. 80. ղ. 50 կ., Քրտինք խմբ. 30, Ծիածան խմբ. 172, Կարօ խմբ. 70, Ռաշտից 225, Էնզէլիից 225, Թափառիկից 71, ըժ. Ա-ից 20, մի Պ-նից 56 ղ. 20 կ., N N 100, Բ.-ից 50, Էնզելի № 14 թուով 545, Շահրուզ Nr 9 թուով 800, Սաւզվար № 8 թուով 925 ղրան։

Մեր խմբագրութեան հասցէն՝
Rédaction du „Droschak“, Genève (Suisse)